

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ 29 ՏԱՐԵԿԱՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

«Մասիս» քեւակոխեց իր լոյս բնծայման 29-րդ տարին: Այս երեւոյթը հպարտութեամբ կը գեղում է մի մասիսականի սիրտը: «Մասիս»-ի անխափան, ժամացոյցի նշտապահութեամբ ու սկզբունքային անշեղ վարձագծով շարքական լոյս բնծայումը կ'ապացուցանէ մէկ նշարտուքին, որ ան որդեգրուած ու հոգացուած է զինք հովանաւորող գաղափարական բնտանիքին, անոր գոհարբող աշխատակիցներուն եւ ընթերցատէր հասարակութեան կողմէ:

Տարակոյս չի կայ, որ հեշտ չանցան «Մասիս» շարքաթերթի բոլորած հրատարակութեան 29 տարիները: Տնտեսական տագնապներ, մարդուծի պակաս, ու աննախատեսելի ամէնօրեայ կարիքներ շատ անգամներ յուսահատեցուցին վիճակներու մատնեցին բնծնունտ պատուաւոր նախաձեռնութեան նուիրեալ պատասխանատուները: Անոնցմէ ոչ մէկը բնկրկեցաւ: Անոնք կը հաւատային իրենց առաքելութեան կարեւորութեան, նպատակակէտ ունենալով իրենց ժողովուրդին ծառայելու բարոյապէս եւ գործնապէս: Մնացին մեծ գոհողութիւններ պահանջող պայմարի պատմէջի վրայ ու վնասապէս շարունակեցին անոր հրատարակման գործը:

Ի պատիւ անոնց յայտնենք, թէ տարուած հետեւողական, անդուլ եւ մասնաւորաբար գաղափարասլաց աշխատանքները պակասեցան յաջողութեամբ: «Մասիս» ոչ միայն յարատեւեց, պահեց իր գոյութիւնը, տասնամյակեց իր տպագրական ֆանակը, բարեգործեց իր էջերը, հարստացուց անոնց բովանդակութիւնը, այլ նաեւ յաջողեցաւ համակարգչային մակարդակի վրայ մատչելի դարձնել Սփիւռքով ու հայրենիքով մէկ հայութեան:

«Մասիս» ոչ միայն մնաց պատմէջի վրայ, նաեւ՝ դարձաւ փնտրուած թերթ: Կրպակներուն՝ ան եղաւ նաեւ «տակից» տրամադրուող փնտրուած շարքաթերթ: Անօրինակ գարմանքի մատնուած էին թերահատուները: Անոնք՝ որոնք նկատի ունենալով հայ մամուլի դիմագրուած նիւթական, մարդուծի եւ աշխատակիցներու ապահովման դժուարին կարեւորութիւնները, գրաւի ինկած էին անոր դադրեցման հաւանականութեան վրայ. տարի մը երկու՝ հազիւ թէ:

«Մասիս» կարեւոր դիմանալ, կը մտածէին անոնք:

Բայց չուշացան անոնք, այսպէս կոչուած մեր ասպարէզային «բարեկամները», որոնք տարիներ ետ, առաջիններէն եղան կրկնակի շնորհաւորելու «Մասիս» շարունակական հրատարակութիւնը

Շաբ.ը էջ 16

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆԿԱՏԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՕՐԵՆՔԸ

Միացեալ Նահանգներու Դաշնակցային վերաքննիչ դատարանը Հինգշաբթի, Օգոստոս 20-ին հրատարակեց որոշում մը՝ հակասահմանադրական նկատելով 2000 թուականին ի վեր Քալիֆորնիա նահանգի մէջ գործող այն օրէնքը, որու համաձայն Ցեղասպանութեան զոհ դարձած հայերու ժառանգորդները իրաւունք կ'ունենային հատուցում պահանջելու օտարերկրեայ ապահովագրական ընկերութիւններէն: Դատարանը իր այս որոշումին որպէս հիմք ընդունած է այն, որ Միացեալ Նահանգներու դաշնակցային կառավարութիւնը պաշտօնապէս չէ ճանչցած Հայկական Ցեղասպանութիւնը եւ հետեւեալը նախապատուութիւնը կ'երթայ դաշ-

նակցային օրէնքին:

Քալիֆորնիան ընդգրկող 9-րդ վերաքննիչ դատարանի երեք դատաւորներէ բաղկացած կազմը իր որոշումը առած է 2-ի դէմ 1 ձայնով: Այսպիսով, խումբ մը Ամերիկահայեր, որոնք դատ բացած էին Գերմանական երեք ապահովագրական ընկերութիւններու դէմ, կը գրկուին իրենց հարցը շարունակելու իրաւունքէն: «Եւ կը խորհիմ որ որոշումը նախատելի է: Եթէ ուզենք գալն տրամաբանել, ուրեմն կը նշանակէ թէ, բոլոր այն 40 նահանգները որոնք ճանչցած են Ցեղասպանութիւնը, իրենց որոշումները մէկդի պէտք է դնեն».- այս առթիւ յայտարարած է հայցուոր կողմի պաշտպան փաստա-

բան Պրայըն Գաբաթէք:

«Այսօր տխուր օր մըն է Ամերիկահայութեան համար».- յայտարարած է ան ու աւելցուցած, որ այս որոշումը անկարելի կը դարձնէ ձեռք ձգել զոհներու դրամատնային հաշիւները, ապահովագրական գումարները եւ այլ կալուածները: Գաբաթէք յայտնած է որ, նոր վերաքննութիւն պիտի պահանջէ նոյն դատարանի աւելի մեծ կազմին կողմէ:

Հայկական կողմի փաստաբաներէն Վարդգէս Եղիանան դատարանի որոշումը կոչած է «կործանարար»:

Գերմանական ապահովագրա-

Շաբ.ը էջ 4

ԱՄԵՐԻԿԱԶԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՍ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԷՏՈՒՐՈՑ ՔԵՆԵՏԻ ՍԱՐԸ



Երեքշաբթի, Օգոստոս 25-ի երեկոյեան վախճանեցաւ Միացեալ Նահանգներու Ծերակոյտի երկարամեայ անդամ Էտուարտ Քենէտի:

77-ամեայ Քենէտի շուրջ մէկ տարի է ի վեր կը տառապէր ուղեղի քաղցկեղով: Հակառակ որ ան ենթարկուեցաւ բաւական բարդ վիրահատութեան, սակայն չկարողացաւ յաղթահարել հիւանդութեան: Միացեալ Նահանգներու նախկին նախագահ ձոն Քենէտիի կրտսեր եղբայր՝ Էտուարտ առաջին անգամ Ծերակոյտի անդամ ընտրուած էր 1962 թուականին: Ան դառնալով օրէնսդիր մարմինի ամենէն ազդեցիկ դէմքերէն, Դեմոկրատ կուսակցութեանն էր կը վայելէր մեծ հեղինակութիւն:

Էտուարտ Քենէտի եղած է նաեւ Ամերիկահայութեան մօտ բարեկամ եւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերու Չատագով:

1980 թուականին Էտուարտ Քենէտի մասնակցեցաւ Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն, սակայն նախընտրական պայքարի ընթացքին պարտուեցաւ օրուայ նախագահ Զիմի Քարթըրի դէմ:

Նախագահ Պարաք Օպամա յայտարարեց, որ Էտուարտ Քենէտիի մահուամբ Միացեալ Նահանգները կորսնցուց մեծ առաջնորդ մը:

«ՂԱՐԱԲԱՂԻ ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԼՈՅ» ԸՍԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի փոխ արտաքին գործոց նախարար Շաւարշ Քոչարեան ուսական ռատիոկայանի մը տրուած հարցազրոյցի ընթացքին յայտնած է որ, Լեռնային Ղարաբաղը լքած ատրպէյճանցիներու կողմէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչումը, հնարաւորութիւն կու տայ անոնց, վերադառնալ Ղարաբաղ: «Դեռ աւելին՝ երբ միջնորդներն առաջարկում են որպէս փոխգիշտում կրկնակի հանրաքուէ անցկացնել, ապա բնական է, որ նրանք նկատի ունեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բոլոր բնակիչներին, ովքեր այնտեղ էին բնակուած հակամարտութեան սկսուելու պահին», - աւելցուցած է նախկին ընդդիմադիր գործիչը:

Քոչարեան նաեւ ըսած է, որ նշուած հաւանական հանրաքուէին ատրպէյճանցիները պէտք է մասնակցին իրենց գտնուած վայրին



ՀՀ փոխ արտաքին գործոց նախարար Շաւարշ Քոչարեան

մէջ. «Դրանից յետոյ նրանք պէտք է որոշեն՝ արդեօ՞ք իրենք անտարբեր չեն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի նկատմամբ: Վերջապէս, մենք կարծում ենք, որ անվստահութեան ու փոխթշնամանքի այն մակարդակը, որ կայ

Շաբ.ը էջ 5

ՄԴՅԿ ԵՒ ՌԱԿ ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Անցեալ շաբաթ, ՌԱԿ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը Փասատիկայի իր կեդրոնէն ներս հիւրընկալեց ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը: Աւելի քան երկու ժամ տեւող ջերմ հանդիպման ընթացքին ֆննարկուեցան համայն հայութեան եւ գաղութի յուզող զանազան հարցեր: Յատուկ ուշադրութեան արժանացան Ղարաբաղեան հիմնահարցի եւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու ներկայընթացքը եւ յատկապէս վերջինիս ունեցած բացասական անդրադարձը Հայկական Ցեղասպանութեան նախաձեւման գործին վրայ, մասնաւորապէս Ամերիկայի Միացեալ նախագահներէն ներս:

Հանդիպման ընթացքին շեշտուեցաւ աւելի սերտ համագործակցութեան անհրաժեշտութիւնը, մանաւանդ այն հարցերու կապակցութեամբ, որոնք վերաբերին լուսանկարաբանական հայաեզր գաղութին: Առ այդ, որոշուեցաւ ունենալ երկամսեայ պարբերական հանդիպումներ, որոնց ընթացքին պիտի մշակուին համատեղ ծրագիրներ՝ ի շահ հայ համայնքի բարօրութեան:

ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմին
ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւն

ՕՐՈՒԱՅ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸՏԵ ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԵՆ ԱՆԴԻՆ

Սկսեալ այն օրէն, երբ Հայաստանի Հանրապետութեան գործող նախագահ Սերժ Սարգսեան Մոսկովայի մէջ կատարեց իր հռչակաւոր յայտարարութիւնը, թէ ինք պատրաստ է ընդառաջելու Հայ եւ թուրք պատմաբաններու յանձնախումբ կազմելու թրքական առաջարկին, Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքները յայտնուեցան սառած վիճակի մէջ: Եւրոպական բազմաթիւ երկիրներու մէջ, ներառեալ Գերմանիոյ, Յեղասպանութեան ճանաչման հարցը օրակարգի վրայ կը թուէր ըլլալ, դադարեցան արծարծուելէ: Միակ երկիրը, ուր տակաւին ճանաչման հարցը կը մնար «տաք», Ամերիկայի Միացեալ Նահանգներն էր, ուր հայկական հզօր համայնքը, նախագահական ընտրարշաւի առթիւ կարողացած էր թեկնածու Պարաթ Օպամայէն ստանալ խոստում թէ պատրաստ է պաշտօնապէս ճանչնալու Հայկական Յեղասպանութիւնը:

Մեծ յոյսեր կային, որ վերջապէս պիտի գտնուէր Ամերիկայի նախագահ մը, որ հաւատարիմ մնալով իր խոստումին պիտի գար յարգելու նախընտրական իր յանձնառութիւնը: Սակայն, թուրքերոյ հետ Հայաստանի իշխանութիւններու սկսած «ֆութպոլային դիւանագիտութիւնը» եւ ապա Յեղասպանութեան տարելիցի նախօրեակին՝ այս տարուայ Ապրիլ 22-ին, «ճանապարհային քարտէզի» մը շուրջ Հայաստանի եւ թուրքերոյ միջեւ կնքուած համաձայնութիւնը, հարուած մը եւս հասցնելով՝ եկան առիթ տալու նախագահ Օպամային, որ պէտքէն ան հետ կանգնի իր խոստումէն: Մինչ այդ, սկսած էր դանդաղիլ նաեւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան առջեւ գտնուող Յեղասպանութեան բանաձեւը:

Եւ ահա ապրիլ, անցնող շաբաթավերջին հայտնութիւնը ստացաւ նոր հարուած մը: Արդարեւ, Միացեալ Նահանգներու շրջանային վերաքննիչ դատարանը եկաւ որոշում կայացնելու, որ Յեղասպանութեան զոհերու ժառանգորդները իրաւունք չունին Քալիֆորնիոյ նահանգային դատարաններու մօտ հայց ներկայացնելու ապահովագրական ընկերութիւններու դէմ: Դատարանը իր այս որոշումին որպէս հիմք ընդունած է այն, որ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը պաշտօնապէս չէ ճանչցած Հայկական Յեղասպանութիւնը եւ որ դաշնակցային կառավարութեան որոշումները նախապատուութիւն ունին Քալիֆորնիա Նահանգի օրէնքներուն վրայ, ուր Յեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունուած է 39 այլ նահանգներու շարքին:

Ինչպէս ծանօթ է, վերջին տարիներուն Ամերիկահայ ծանօթ փաստաբան Վարդգէս Եղիաեանի տարած հսկայ աշխատանքներուն եւ պատմական պրպտումներուն շնորհիւ, նոր էջ մը բացուած էր Հայկական Յեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, այս անգամ դատական որոշումներու միջոցաւ: Այս գծով առաջին յաջողութիւնները արդէն իսկ արձանագրուած էին, տալով իրենց

պտուղները: Եղիաեան, իր կողքին ունենալով իրաւաբաններ Գաբաթէքը եւ Մարք Կիրակոսը, ապահովագրական երկու ընկերութիւններու՝ ամերիկեան «Նիւ Եորք Լայֆի» եւ Ֆրանսական «Աքսա»-ի դէմ բացուած դատերով, կարողացած էին միլիոնաւոր տոլարներու հատուցում ապահովել ցեղասպանութեան զոհ դարձած եւ կեանքի ապահովագրութիւն ունեցած հայերու ժառանգորդներուն եւ նաեւ հայկական բարեսիրական եւ եկեղեցական կազմակերպութիւններուն:

Հայ փաստաբաններու այս խումբի յաջողութիւնը գերմանական հսկայ «Տոչա Պանքն» էր, որու մօտ պահուած են մեծ թիւով հայերու հաշիւները: Փաստաբանները առաջին հերթին կը պահանջէին այդ դրամատունէն, որպէսզի յանձնէ ամբողջական ցուցակը այն հայերուն, որոնց հաշիւները մնացած էին անտէր, անոնց զոհուելէն ետք: «Տոչա Պանք» ցարդ կը մերժէ կատարել այդ պահանջը: Յառաջիկայ ամիսներուն կը սպասուէ նահանգային դատաւորի որոշումը՝ պարտադրելու համար «Տոչա Պանքին», որպէսզի ան գործակցութիւն ցուցաբերէ, իրականութիւնը ի յայտ բերելու համար:

Տակաւին յստակ չէ թէ, Վերաքննիչ դատարանի Օգոստոս 20-ի որոշումը, որքանով պիտի ազդէ նաեւ «Տոչա Պանքի» դէմ բացուած դատին վրայ:

Վերադառնալով դատական որոշումին եւ առանց ծանօթ ըլլալու հարցի բոլոր երեսներուն կ'արժէ հարց տալ թէ, ի՞նչ կապ ունի իրաւական հարց մը, բացառապէս քաղաքական որոշումի մը հետ, որ առկա կը մնայ միայն ու միայն թուրքերոյ ճնշումներուն պատճառաւ: Այսպիսով, ամերիկեան դատարանը եւս, անուղակի նկերպով ենթարկուած կ'ըլլայ թրքական սպառնալիքներուն:

Հոս պէտք է յիշեցնել որ, 1975 թուականի Ապրիլ 9-ին ընդունուած թիւ 148 բանաձեւով, 332-ի դէմ 55 ձայնով Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը ընդունած է Հայկական Յեղասպանութիւնը: Թէեւ, այդ բանաձեւը իր շարունակութիւնը չէ ունեցած Մերակոյտէն ներս:

Իսկ, Գոնկրէսի տարբեր յանձնախումբերը բազմաթիւ անգամներ վաւերացուցած են՝ Հայկական Յեղասպանութեան բանաձեւերը: Ամենայնդէպս, այս հարցը տակաւին փակուած չէ եւ հայկական կողմի փաստաբանները առիթ պիտի ունենան դարձեալ հետապնդելու զայն՝ աւելի բարձր դատարաններու մօտ:

Այս իրադարձութիւններու լոյսին տակ, պէտք է պահանջել Հայաստանի իշխանութիւններէն, որպէսզի Հայկական Յեղասպանութեան հարցը դուրս բերեն թուրքերոյ հետ դիւանագիտական սակարկութիւններու ծիրէն, ձգելով որ, սփիւռքը որպէս Յեղասպանութեան հետեւանքներու անմիջական կրողը, մարդկային իրաւունքներու հարթութեան վրայ շարունակէ հետապնդել իր իրաւունքները:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ

ՄԴԿ ԸԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Համակարգային խոր ճգնաժամը, որը համակել է ողջ Հայաստանը արդի փուլում, թափանցել է մեր ժողովրդի հասարակական - քաղաքական, տնտեսական, հոգեւոր ու մշակութային կեանքի բոլոր ոլորտները, ներկայ իշխանութիւնների կողմից պետութեան զարգացման որեւէ հենքային գաղափար, սկզբունք, հայեցակարգ, ժխտելու առարկայական հետեւանք է:

ՄԴԿ-ն, հաւատարիմ մնալով դեռեւս 122 տարի առաջ մշակած սոցիալ - դեմոկրատական գաղափարախօսութեանը, կրկին անգամ վերահաստատում է այն առանցքային արժէքները, մօտեցումներն ու հայեցակէտերը, որոնցով եւ առաջնորդուած է իր ընթացիկ քաղաքականութիւնը վարելիս:

Սոցիալական խնդիրներից բացի, կարեւորագոյն խնդիրը ՄԴԿ-ի համար հանդիսանում է ազգայինը: Այդ կտրուածքով ամբողջական Հայաստանի վերակերտումը եղել է, կա, ու կը լինի ՄԴԿ-ի համար հեռահար բաղձալի տեսլական: Սակայն կան նաեւ հարցեր, որոնք պահանջում են այժմէական լուծումներ:

1. Արցախեան հիմնախնդիր: Նոյնիսկ նուազագոյն չափով վերձանուած մադրիդեան սկզբունքների հակահայկական բովանդակութիւնը, մեզ յուշում է, որ այն հայանպաստ չէ, այն չի կարող արցախեան հիմնախնդրին արդարացի լուծում տալ եւ հետեւաբար մեզ համար անընդունելի է:

Արտաքին ուժերի ճնշմամբ ու ուղղորդմամբ, ոչ լեգիտիմ եւ այդ պատճառով խոցելի իշխող վարչակարգը իր կամքից դուրս մխրճուել է մի գործընթացի մէջ, որը, եթէ անյապաղօրէն չկասեցուի, զցելու է երկիրը աղետալի ծուղակի մէջ: Հայ զինուորի արեան գնով ազատագրուած տարածքները, ոչ թէ մանրադրամ են շուկայական առեւտրի համար, այլ հանդիսանում են մեր պատմական հայրենիքի անբաժան մասը:

2. Հայ - թուրքական յարաբերութիւններ: Նոյն պատճառաբանութեամբ (լեգիտիմութեան բացակայութիւնը) ներկայ բանակցային գործընթացում աղետալի ծուղակ է հանդիսանում Հայաստանի համար տիրահաղթական ճանապարհային քարտէզի դրոյթների ընդունումը, որը լի է ազգային արժանապատուութիւնը ստորացնող, ազգային անվտանգութիւնը խոցելի դարձնող դրոյթներով: Մինչդեռ ՄԴԿ-ն համոզուած է, որ Յեղասպանութեան ճանաչումը թուրքերայի կողմից միակ դուռն է հայ - թուրքական յարաբերութիւնները նորմալացնելու ուղղութեամբ:

ՄԴԿ-ն գտնում է, քանզի թուրքերան ինքն է միակողմանի նախաձեռնել Հայաստանի հետ սահմանի փակումը, ապա ինքն էլ պէտք է մտածի այդ սահմանը բացելու մասին: Այլ խնդիր է, թէ Հայաստանը ինչպիսի դիրքորոշում կ'ունենայ այդ պարագայում: ՄԴԿ-ի կարծիքով մեր երկիրը ոչ պետականօրէն, ոչ էլ իրաւականօրէն դեռ պատրաստ չէ հայ - թուրքական սահմանի վերաբացմանը:

Ինչպէս սոցիալական, այնպէս էլ ազգային խնդիրները կարող են լուծումներ ստանալ միմիայն ժողովրդավար երկրում: Ամենից առաջ անհրաժեշտ է հաստատել երկրում ժողովրդավարութիւն, որը հիմնարար արժէք է կուսակցութեան համար: Հենց այդ դրոյթով էլ ՄԴԿ-ն մաս է կազմել համաժողովրդավարական Հայ ազգային կոնգրեսին, որը կազմաբանում է ենթարկում իշխող ակտորիտար ռեժիմը: Միայն ժողովրդավարութեան հաստատմամբ, ազնիւ, հաւասար մրցակցութեան մէջ մտնելով այլ կուսակցութիւնների հետ, ՄԴԿ-ն նարաւորութիւն կ'ունենայ անկաշկանդ քարոզելու եւ իրականացնելու իր կողմից որդեգրած գաղափարներն ու սկզբունքները:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹՐՈՒՄՆԵՐԹ՝
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԹՐՈՒՄՆԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐԸԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ի «ՑԱԾՐ ՎԱՐԿԱՆԻՇԻ» ՄԱՍԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ ԵՆ

«ԱՌ-ԱԻՕՏ»: «Իշխանութեան բաղձալի երազանքն է, որ Հայ ազգային կոնգրեսը կորցնի իր վարկանիշը», - արձագանքելով «Առաւօտ»-ում հրատարակուած ՀՀ մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովի այն տեսակէտին, որ վերջին շրջանում իր մարզային այցելութիւններով ՀԱԿ-ը փորձում է վերականգնել «կորցրած իմիջը» եւ նախապատրաստուել 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւններին, ասաց Կոնգրեսի մաս կազմող ՄԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը: Տիկին Սարգսեանը նաեւ ակնարկեց, որ իշխանութիւնն այս ընթացքում նաեւ ինտենսիվ աշխատել է, որպէսզի ՀԱԿ-ը կորցնի իր իմիջը, «եւ այդ ճանապարհին դիմում են ցանկացած միջոցի, ընդհուպ մինչեւ կուսակցութիւնների ներսում պառակտումներ մտցնելը»:

Ամէն դէպքում, մեր գրուցակիցը վստահեցնում է, որ նման քայլերը հիմնականում արդիւնաւէտ չեն լինում, եւ իշխանութիւնների ցանկութիւնը՝ Կոնգրեսը պառակտուած կամ վարկաբեկուած տեսնելու, ցանկութիւն էլ կը մնայ: «Որպէս ՀՀ քաղաքացի, ես անկեղծօրէն կը ցանկանայի, որ երկրի իշխանութիւնները հասարակութեան մէջ ունենային այն իմիջը, որն ունի ՀԱԿ-ը. դա այն առաւելագոյն վարկանիշ» է, որը հնարաւոր է ունենալ Հայաստանում: Կարծում եմ, անգորութիւնից են իշխանաւորները նման յայտարարութիւններ անում, քանի որ եթէ մեր երկրում կա քաղաքական ուժ, որի հետ ժողովուրդը իր յոյսն ու ապագան է կապում, դա ՀԱԿ-ն է: Իսկ մարզային վերջին այցելութիւնները աւելորդ անգամ ապացուցում են դա», - ասում է ՄԴՀԿ ատենապետը:



ՄԴՀԿ-ի Հայաստանի ատենապետ Լիւդմիլա Սարգսեան

դիպումները, նրանց հոգեբանական աջակցութեան ցուցաբերումը»:

Տիկին Սարգսեանը յիշեցնում է, որ քաղաքատարկեալներն ու նրանց ընտանիքներն արդէն մէկուկէս տարի է, կրում են սոցիալական, ֆիզիկական եւ մնացեալ բոլոր նեղութիւնները, որ պարտադրել են այս իշխանութիւնները: «Մեր գործողութիւնները մտածուած եւ նպատակային են, եւ եթէ կան ուժեր, որոնք պէտք է մտահոգուեն իրենց իմիջով, կարծում եմ, իշխանական կերակրատաշտը շրջապատած ուժերն են», - յայտարարում է ՄԴՀԿ ատենապետը, լաւելելով, որ ՀԱԿ-ը պատրաստուած է ոչ թէ 2012-ի խորհրդարանական հերթական ընտրութիւնների, այլ արդէն իսկ պատրաստ է արտահերթ քաղաքական իրավիճակների, որոնք, մեր գրուցակցի համոզմամբ, դժբախտաբար, սպառնում են մեր երկրին:

Մասնաւորաբար՝ «ԼՂՀ հարցի շուրջ այնպիսի զարգացումներ կան, որ արտակարգ իրավիճակները ոչ թէ չի կարելի բացառել, այլ նոյնիսկ տեսանելի են: Ու իբրեւ պետութեան եւ պետականութեան համար մտահոգ ուժ, մենք ամէն ինչի պէտք է պատրաստ լինենք: Իրենք միայն կարող են երազել, որ Հայաստանում ընտրութիւնները կը լինեն հերթական», - ասում է տիկին Սարգսեանը:

ՓԱՇԻՆԵԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՊԱՅԱՆՋՈՒՄ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Նիկոլ Փաշինեանի 15 հատորանոց քրէական գործին ծանօթանալու համար նրա փաստաբանները նախաքննութեան մարմնից եւս 10 օր են խնդրել:

Նախաքննութեան մարմնի կողմից Փաշինեանի փաստաբաններին տրամադրած 20 օրը լրանում է Օգոստոսի 26-ին:

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի քրէական գործը որ դատարանն է ուղարկուելու եւ որ դատաւորն է լսելու, այս պահին փաստաբաններին յայտնի չէ:

Փաշինեանի փաստաբաններից Սուրիկ Մուրադեանն այսօր «Ա1+ին» նաեւ տեղեկացրեց, որ իրենք դիմել են Մարդու իրաւունքների պաշտպանին եւ Արդարադատութեան խորհուրդ եւ պահանջել պատասխանատուութեան ենթարկել «Երեւան-Կենտրոն» քրէակատարողական հիմնարկի պետ Նելսոն Զաքարեանն նրա անօրինական գործողութիւնների համար: Նելսոն Զաքարեանը օրերս հրաժարուել էր Փաշինեանին փոխանցել օրուայ մամուլը: Յիշեցնենք, որ Փաշինեանին մեղադրանք է առաջադրուել Քր օր 225 յօդուածի 1-ին մասով անկարգութիւններ կազմակերպելու եւ 316 յօդուածով՝ իշխանութեան ներկայացուցչին դիմադրութիւն ցոյց տալու համար: Վերջին յօդուածը նրան առաջադրուել էր դեռեւս 2007թ., որը աւելացել է 2008թ. Մարտի 1-ի դէպքերից յետոյ նրան առաջադրուած 225 յօդուածին:

պանին եւ Արդարադատութեան խորհուրդ եւ պահանջել պատասխանատուութեան ենթարկել «Երեւան-Կենտրոն» քրէակատարողական հիմնարկի պետ Նելսոն Զաքարեանն նրա անօրինական գործողութիւնների համար: Նելսոն Զաքարեանը օրերս հրաժարուել էր Փաշինեանին փոխանցել օրուայ մամուլը: Յիշեցնենք, որ Փաշինեանին մեղադրանք է առաջադրուել Քր օր 225 յօդուածի 1-ին մասով անկարգութիւններ կազմակերպելու եւ 316 յօդուածով՝ իշխանութեան ներկայացուցչին դիմադրութիւն ցոյց տալու համար: Վերջին յօդուածը նրան առաջադրուել էր դեռեւս 2007թ., որը աւելացել է 2008թ. Մարտի 1-ի դէպքերից յետոյ նրան առաջադրուած 225 յօդուածին:

ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ ՆՈՒԱԶԵԼ ԵՆ 13.3%-

2009 թուականի Յունուար-Յուլիս ամիսների ընթացքում ՀՀ պետական պիւտճէի եկամուտները կազմել են շուրջ 359 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 426.5 մլրդ դրամ: Պիւտճէի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարուել են եկամուտների գծով՝ 39.9%-ով, ծախսերի գծով՝ 47.6%-ով:

Նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ պետական պիւտճէի եկամուտները նուազել են 13.3%-ով կամ 55 մլրդ դրամով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻԳԻԹԵԱՆ.- «ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԻ՛ ԴԻՏԱՐԿԷՔ ՈՐՊԷՍ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ ԼԵԻՈՆ ՏԵՐՊԵՏՐՈՍԵԱՆՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼԸ»

-Ղարաբաղեան գործընթացն առաջին հերթին պայմանաւորուած է Հայաստանի ներքաղաքական իրավիճակով: Ես յստակ դիտեմ, որ այն երկրների հետ, որտեղ առկայ է դիկտատուրա, խօսում են դիկտատորական լեզուով, այսինքն՝ ուղղակի պարտադրում են լուծումը,- «Դե ֆակտո» ակումբում լրագրողներին ասել է Աժ արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի նախկին նախագահ Յովհաննէս Իգիթեանը:



Յովհաննէս Իգիթեան

Այդ դէպքում քաղաքակիրթ աշխարհը, Հ. Իգիթեանի խօսքերով, ուղղակի փորձում է լուծում գտնել եւ պարտադրել դա այն երկրին, որտեղ հնարաւոր չէ լուծումը գտնել ներսից: Նրա կարծիքով հիմա Լեւոնային Ղարաբաղի հետ կապուած հենց այդ գործընթացն է ընթանում, որը շուտով կարող է դառնալ անդառնալի:

«Եթէ գործընթացը կարող է անդառնալի դառնալ, այդ դէպքում որքանով է ճիշդ, որ ՀԱԿ-ը դադարեցրել է հանրահաւաքները: Հասարակութեան պահանջ չկայ, թէ՛ այն համընկնում է իշխանութեան կարծիքի հետ» «ՊԵՏ»-ի հարցին Յովհաննէս Իգիթեանը պատասխանել է, որ ընդդիմութեան գործընթացը պայմանաւորուած է նաեւ ժողովրդի ակտիվութեամբ, ինչն այսօր չի նկատուում:

«Հանրապետական» գործիչներն իրենց գոհունակութիւնն են յայտնում Մադրիդեան սկզբունքների վերաբերեալ, եւ հասարակութիւնը, ենթադրում եմ, պէտք է գոհ լինի, որ վերջապէս հայանպատ որոշում է ընդունուել: Զկայ այդ ընդվզումը, ժողովուրդը խճճուած է, չգիտի, թէ ինչ է կատարուում, եւ մեր դերն է ահագանգելը: Ինձ թւում է, որ կը գտնուեն գործիչներ եւ ժողովրդի մէջ էլ մարդիկ, որոնք այդ ալիքը կը բարձրացնեն:

Թէ, այնուամենայնիւ, նման իրավիճակում ինչ լուծումներ է տեսնում ՀԱԿ-ը, Յովհաննէս Իգիթեանը պարզաբանել է, որ ամենակարեւորը Հայաստանում ժողովրդավարութիւնը զարգացնելն է:

-Իշխանափոխութիւնը մի՛ դիտարկէք որպէս Սերժ Սարգսեանին Լեւոն Տէր-Պետրոսեանով փոխարինելը: Ընդհանրապէս Հայաստանում անհրաժեշտ է զարգացնել ժողովրդավարութիւնը, ինչը նախադրեալ պէտք է լինի նորմալ ընտրութիւններ անցկացնելու համար, եւ այս ընտրութիւնների ընթացքում նոյնիսկ Սերժ Սարգսեանի ընտրուելը կը համարուի որպէս ժողովրդավարութեան յաղթանակ:

Անդրադառնալով Մեթիւ Բրայզային Ադրբեջանում ԱՄՆ դեսպան նշանակելուն՝ Հ. Իգիթեանը նշել է, որ այդ փաստը խօսում է այն բանի մասին, որ գործընթացը լինելու է Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութեան հիմքում, այսինքն՝ «այն, ինչ որ խօսում էր մինչեւ այս պահը, ուղղակի Բրայզան կը շարունակի իրականացնել որպէս ԱՄՆ ներկայացուցիչ Ադրբեջանում, եւ պատահական չէ, որ Ադրբեջանում, քանի որ այստեղ աւելի գերիշխող են Ադրբեջանի շահերը»:

Նրա կարծիքով խնդրի լուծումը երկու կողմերին պարտադրուած է, եւ իրավիճակը կարող է փոխուել, եթէ բանակցութիւնները հիմնովին փոխուեն, եւ ԼՂ-ն վերադառնայ բանակցային սեղան:

100,000 ԴՐԱՄԱՆՈՑԸ՝ ԱԲԳԱՐ ԹԱԳԱԻՈՐԻ ԴԻՄԱՆԿԱՐՈՎ

Հայաստանի կենտրոնական բանկը շրջանառութեան մէջ է դնում 100000 դրամ անուանական արժէքով ՀՀ թղթադրամ: ԿԲ հասարակայնութեան հետ կապերի ծառայութիւնը հաղորդում է, որ թղթադրամի չափան է 160 x 72 մմ, այն ունի Հայոց Աբգար Ե. թագաւորի դիմանկարը պատկերող եւ անուանական արժէքը ներկայացնող ջրանիշ: Դիմերեսի հիմնական գոյնը կապոյտ է, դարձերեսինը՝ դարչնագոյն: Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մէկն ամբողջութեամբ ներդրուած է թղթի մէջ եւ երեւում է միայն լուսընդդէմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, իսկ միւսը՝ թղթադրամի դարձերեսի վրայ երեւում է արծաթափայլ կէտագծերի, իսկ լուսընդդէմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մէջ կարդացւում է «AMD 100000» մանրատառաշարը:



րամի դարձերեսի վրայ երեւում է արծաթափայլ կէտագծերի, իսկ լուսընդդէմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մէջ կարդացւում է «AMD 100000» մանրատառաշարը:

ԼՈՒՐԵՐ

«ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԷՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՅԱՄԱՐ»

«Ճանապարհային քարտեզը ստորագրելով՝ թուրքերը ցուց տուեցին, որ իրենք չհասարակարարում են Հայաստանի հետ յարաբերությունները որոշ չափով նորմալացնել, չեմ ասում լրիւ: Այնպէս որ, հիմա նախագահը կը գնայ, չի գնա՝ սա այնքան կարեւոր չէ, կարեւորը, որ թուրքերը, իմ կարծիքով, այս պահին օգտագործում են Հայաստանից գիշուները կորզելու համար»,- այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն Ռուբէն Սաֆրաստեանը՝ պատասխանելով Tert.am-ի հարցին, թէ արդեօ՞ք նախագահ Սարգսեանը պէտք է մեկնի թուրքիա, թէ ոչ:

Շարունակելով՝ Սաֆրաստեանն ասել է, որ այսօր այդ հանգամանքն այնքան էլ կարեւոր չէ, կարեւորը, որ թուրքիան, ըստ նրա, ցանկանում է կամ ստիպուած է նորմալացնել յարաբերութիւնները Հայաստանի հետ ու այս ընթացքն օգտագործում է հայկական կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դարաբաղեան

բանակցային գործընթացներից գիշուները կորզելու համար:

Անձնապէս իր կարծիքը յայտնելիս, Սաֆրաստեանն ասել է, որ ինքը կը ցանկանար, որ նախագահ Սարգսեանը չհրաժարուեր իր խոստումից եւ թուրքիա մեկներ այն դէպքում, երբ սահմանները բաց լինեն կամ Հայաստանը լինի ապաշրջափակման նախաշեմին:

Նախագահ Սարգսեանի՝ թուրքիա մեկնելու մասին յայտնի յայտարարութեան մասին ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէնը նշել է, որ Հայաստանի նախագահի յայտարարութիւնն անսպասելի է եղել թուրքիայի համար, որովհետեւ, ըստ նրա, թուրքիան սովոր չէ Հայաստանի իշխանութիւններից նման կտրուկ յայտարարութիւն լսել:

Ինչ վերաբերում է սահմանների բացմանը, թուրքագետը կարծիք է յայտնել, որ այն մօտ ապագայում կը բացուի, սակայն մինչ ֆուտբոլային հանդիպումը հայ-թուրքական սահմանը լրիւ չի բացուի. հնարաւոր է ինչ-որ ուժերի միջոցով:

ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆ. «ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԶԱԽՈՂՈՒԵԼ Է ՅԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՒԱՌՈՒՄ»

«Դուպլէքս» ակումբում հայ-թուրքական յարաբերութիւնների զարգացումներին անդրադառնալով՝ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբեանը նշել է, թէ Սերժ Սարգսեանը ձախողուել է հայ-թուրքական յարաբերութիւնների բնագաւառում: Նա մատնանշել է Սերժ Սարգսեանի մի շարք ձախողումներ.

-Առաջինը՝ նրան խաբել են: Զնայած որ նա գնաց, մեր կարծիքով, անհարկի գիշուների՝ մասնաւորապէս ընդունեց, որ Յեղասպանութեան հարցը պէտք է ուսումնասիրի հայ-թուրքական համատեղ յանձնաժողովը, ինչն, ըստ մեզ, հաւասարազօր է Յեղասպանութեան ուրացմանը, այնուամենայնիւ, Ղարաբաղեան կարգաւորման հարցը չանջատուեց հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցից, եւ թուրքիան վերադարձաւ իր դիրքորոշմանը, թէ մինչեւ Ղարաբաղեան ինդիքը չկարգաւորուի, հայ-թուրքական սահմանի բացում չի լինի: Սա ձախողում է, որը հնարաւոր չէ ուղղել:

Սերժ Սարգսեանի երկրորդ սխալն, ըստ Լ. Զուրաբեանի, այն էր, որ համաձայնելով նման գիշումանը՝ Ս. Սարգսեանը, փաստօրէն, կանցրել է Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը: Երրորդ՝ ամենախոշոր սխալն այն է, որ «ժամանակակից դիւանագիտութեան մէջ ինչ-որ նորամտութիւն է կատարուել», այսինքն՝ Լեւոն Զուրաբեանի խօսքերով՝ «Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի նման գաղտնի պրոտոկոլներ են համաձայնեցուել, որոնք առ այսօր գաղտնի են պահուում եւ՝ թուրք, եւ՝ հայ հասարակութիւններից»:

-Ինչպէ՞ս կարող ենք նման



ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբեան

վարուելակերպից յետոյ վատաչ լինել, որ Ղարաբաղի հարցում եւս գոյութիւն չունեն արդէն համաձայնեցուած գաղտնի փաստաթղթեր,- տարակուսել է նա:

Նրա կարծիքով «Պէ՞տք է գնա Սերժ Սարգսեանը թուրքիա, թէ՞ ոչ, պէ՞տք է շարունակի ֆուտբոլային դիւանագիտութիւնը, թէ՞ ոչ» հարցադրումներն անիմաստ են, քանի որ ո՛չ գնալով, ո՛չ չգնալով՝ Սերժ Սարգսեանն իր կողմից մատնանշած սխալները չի կարող ուղղել. «դրանք անշտկելի սխալներ են»:

Լեւոն Զուրաբեանը համոզուած է, որ այդ սխալներին Սերժ Սարգսեանին դրդել է իր ներքին քաղաքական թուլութիւնը, քանի որ, «լինելով ոչ լեզբիտիմ նախագահ, նա փորձել է այդ տեսակ անհարկի գիշուների գնալ Արեւմուտքի աջակցութիւնն ու իր լեզբիտիմութեան ընդունումն ապահովելու համար»:

-Նման սխալները կարող է շտկել միայն լեզբիտիմ իշխանութիւնը,- յաւելել է նա:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅՆ ՈՒՂԵՐՁՈՎ ԴԻՄԵԼ Է ՅԱՅԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԹԵՐԹ»: Թուրքիայից հայերի վերաբնակեցման 180-րդ տարելիցի կապակցութեամբ Վրաստանի նախագահն ուղերձով դիմել է երկրում ապրող հայերին:

Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին յոյս ունի, որ Վրաստանում, մասնաւորապէս, Սամցխէ Զաւախքում բնակուող հայազգի բնակչութիւնը՝ վրացիների հետ միասին, կը շարունակի վրացական պետականութեան կառուցումը փոխադարձ յարգանքի եւ աշխատասիրութեան հիման վրայ, ինչպէս դա եղել է նախկինում: Նման ուղերձով Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին դիմել է էթնիկ հայերին՝ շնորհաւորելով նրանց Ախալցխայի Սիվիլիսի գիւղում կայացած միջոցառման առթիւ՝ նուիրուած էրզրումից հազարաւոր հայերի վերաբնակեցման 180-ամեակին: Այդ մասին հաղորդում է GeorgiaOnline-ը:



Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլի

Հենց Սիվիլիսին է այն գիւղը, որտեղ վերաբնակուել են թուրքիայից փախած հայերը, արքեպիսկոպոս կարապետ Բագրատունու գլխաւորութեամբ:

Նշենք, որ արքեպիսկոպոսի պատուին 8 տարի առաջ Ախալքալաքում կանգնեցրել էին նրա յուշարձանը: Կարապետ Բագրատունու աճիւնը հանգչում է Ախալցխայում:

«Նիւ Եորք Լայֆի» մէկ խօսակերպ «Աստիէյթիս փրէս» գործակալութեան ըսած է, որ իրենց ընկերութիւնը որեւէ մտադրութիւն չունի ետ պահանջելու 2005-ին վճարած գումարները. - «Մեր ընկերու-

թիւնը կը պահպանէ ազնուութեան եւ մարդկայնութեան արժէքները, այս արդար գործընթացի շնորհիւ հայազգի բազմաթիւ բարեկամներ ունեցանք: Եւ մենք շատ բարձր կը գնահատենք այդ»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ

ԱՆԳԱՐԱՅՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՅԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԹԵՐԹ»: Կիպրական, քրտական եւ հայկական հիմնախնդիրների լուծումը կը նպաստի տարածաշրջանում կայունութեան հաստատմանը: Նման կարծիք է յայտնել Անգարայում Մեծ Բրիտանիայի դեսպան Նիք Բէյերդը:

Բրիտանացի դեսպանը յայտարարել է, որ եթէ թուրքիան լուծի իր երեք՝ քրտական, հայկական ու կիպրական հիմնախնդիրները, ապա տարածաշրջանում իրավիճակը կը բարելաւուի: Միեւնոյն ժամանակ, նա նշել է, որ թուրքիան զգալի առաջընթաց է արձանագրել հակամարտութիւնների կարգաւորման հարցում:

«Եթէ մեզ յաջողուի յաջորդ տարի կարգաւորել այդ երեք հիմնախնդրերը, ապա տարածաշրջանը կը յայտնուի աւելի բարենպաստ կարգավիճակում», - ասել է Նիք Բէյերդը թուրքական «Hurriyet Daily News & Economic Review»-ին տուած հարցազրոյցում:

Անդրադառնալով թուրքիայի՝ Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ջանքերին, դեսպանն ընդգծել է, որ երկրի կառավարութիւնը բաւականաչափ խիզախութիւն ցուցաբերեց՝ յանձն առնելով երկու երկրների միջեւ կապերի բարելաւմանը միտուած քայլեր:

Խօսելով հայ-թուրքական սահմանի բացման եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման փոխկապակցուածութեան մասին, բրիտանացի դեսպանը



Դեսպան Նիք Բէյերդ

նկատել է, որ իր խօսքերով, «այժմ մեզ, հաւանաբար, հարկաւոր է աւելի մեծ առաջընթաց ձեռք բերել ԼՂ հակամարտութեան հարցի կարգաւորման շուրջ, որպէսզի աւելի ընդարձակ քայլեր ձեռնարկեն հայ-թուրքական սահմանի բացման համար»:

«Ես չեմ կարծում, որ թուրքիան մեծ ընտրութիւն ունի: Թուրքիան լաւ յարաբերութիւնների մէջ է Ատրպէյճանի հետ եւ այժմ էլ փորձում է յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ: Դու չես կարող ընտրել մէկը՝ միւսի փոխարէն: Կարծում եմ, որ հարկաւոր է, նախ եւ առաջ, յանուն տարածաշրջանի կայունութեան, այդ ինդիքները առաջ քաշել միասնաբար», - նշել է դեսպանը:

Տուեալ համատեքստում Նիք Բէյերդը յաւելել է, որ իրենք յորդորում են Միացեալ Նահանգներին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբին միջնորդի դեր կատարել՝ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ համաձայնութիւն ձեռք բերելու համար:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ

Շարունակուած էջ 1-էն
կան ընկերութիւնները ներկայացնող փաստաբան Նիլ Սոլթմըն որոշումը նկատած «չափաւոր» յայտնելով, որ արտաքին յարաբերութիւններու պարագային նախապատուութիւնը պէտք է տրուի դաշ-

նակցային կառավարութեան: 2005-ին Ամերիկեան «Նիւ Եորք Լայֆ» ապահովագրական ընկերութիւնը միլիոնաւոր տոլարի փոխհատուցում կատարած էր Յեղասպանութեան զոհերու հայ ժառանգորդներուն: Նոյնը ըրած էր նաեւ Ֆրանսիական «Աքսա» ընկերութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԴԻԿԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՈՒՂԱԿԸ

Սերժ Սարգսեանն իհարկէ կանգնած է դժուարին ընտրութեան առաջ: Նա պէտք է որոշի՝ ընդունի արդեօք Հոկտեմբերին Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային պատասխան խաղը դիտելու Աբդուլլահ Գիւլի հրահարը, թէ մերժի այն: Եթէ մերժի, ապա պէտք է իր այդ քայլի համար բացատրութիւն տայ միջազգային հանրութեանը, քանի որ մերժումը կը նշանակի ֆուտբոլային դիւանագիտութեան, այսինքն հայ-թուրքական յարաբերութեան բարելավման գործընթացի աւարտ: Եթէ ընդունի, ապա պէտք է իր այդ որոշման համար բացատրութիւն տայ հայութեանը, քանի որ ընդունելով հրահարն ու գնալով Թուրքիա, Սերժ Սարգսեանը փաստացի շարժանկում է Հայաստանի համար ձախողում խաղն ու «Չուր լցնում» Թուրքական դիւանագիտութեան շրջադարձը:

Ներքին, այսինքն հանրային լեզուի մեծութեան առկայութիւնն անկասկած կը հեշտացնէր Սերժ Սարգսեանի ընտրութիւնը, քանի որ այդ դէպքում նրա ամէն մի ընտրութիւն կը յենուէր հանրային աջակցութեան վրայ, իսկ դա արդէն որեւէ երկրի նախագահի ազատում է աւելորդ բացատրութիւններից, քանի որ լեզուի մեծութիւնն ինքնին շատ ու շատ որոշումների բացատրութիւն է: Բայց պարզ է նաեւ, որ հենց այդ բացատրութեան բացակայութիւնն էր այն «անբացատրելի» վարքի պատճառը, որ Հայաստանի իշխանութիւնն իրեն թոյլ տուեց Թուրքիայի հետ յարաբերութեան բարելավման նախաձեռնութիւնից յետոյ:

Հիմա արդէն թուում է, որ նոյնիսկ ուշ է Սերժ Սարգսեանի համար մտածել, թէ ներքին լեզուի մեծութեան ապահովմանն ուղղուած քայլերի միջոցով կարելի է հայ-թուրքական յարաբերութեան հարցում ձեռք բերել անկախութիւն եւ իրականացնել լիովին ինքնուրոյն, առաւելապէս Հայաստանի, ոչ թէ Հայաստանի իշխանութեան շահից բխող քաղաքականութիւն: Աւելին, ինչպէս երեւում է, Սերժ Սարգսեանը նոյնիսկ դրա ցանկութիւնն էլ չունի, այլապէս մինչեւ այժմ յստակ յայտարարած կը լինէր, որ քանի դեռ Թուրքիան առաջնորդում է ժամանակ ձգելու եւ իմիտացիաների շնորհիւ այլ միջազգային եւ տարածաշրջանային ինքնուրոյն լուծելու եւ նպատակ հետապնդելու ձգտումով եւ դրանք դարձնում է հայ-թուրքական յարաբերութեան նախապայման, Հայաստանի նախագահը Թուրքիայում անելիք չունի եւ ընդհանրապէս Հայաստանն անե-

լիք չունի թուրքական դիւանագիտութեան հետ միեւնոյն սերանին:

Բայց այդուհանդերձ, չնայած ներքին լեզուի մեծութեան միջոցով արտաքին անկախութեան համելու տարբերակի հանդէպ Սերժ Սարգսեանի անտարբեր եւ դժկամ վերաբերմունքին, ակնյայտ է, որ առանց այն էլ ֆուտբոլային դիւանագիտութեան ծուղակն ընկած Հայաստանի Հանրապետութեանը հարկաւոր է, որ Սերժ Սարգսեանը կայացնի օպտիմալ որոշում: Իսկ քանի որ խօսքը ծուղակն ընկած վիճակի մասին է, ապա Հայաստանի շահից թերեւս բխում է մերժել Գիւլի հրահարը, քանի որ գտնուելով ֆուտբոլային դիւանագիտութեան ծուղակում, Սերժ Սարգսեանը Թուրքիայում երեւի թէ չի կարող ցուցաբերել անհրաժեշտ ճկունութիւն, եւ գիշերը նրան մէկ էլ տեսար այնպիսի մի համատեղ փաստաթուղթ առաջարկէն ստորագրութեան, որի համեմատութեամբ Ապրիլի 22-ի կէսգիշերային հայ-թուրքական համատեղ յայտարարութիւնը կարող է թուալ մեզ համար յաղթական պակտ:

Բայց հասկանալի է, որ եթէ հայ հասարակութեան համար մերժումը կը լինի ընկալելի, ապա միջազգային հանրութիւնը Սերժ Սարգսեանից թերեւս սպասում է հակառակը: Հետեւաբար միջազգային հանրութիւնը կարող է եւ հիասթափուել Սերժ Սարգսեանից, ինչը Սարգսեանի համար անկասկած լուրջ մտահոգութեան առարկայ է: Բայց, ելք կայ նաեւ այդ իրավիճակից: Պարզապէս կարելի է հրահարը մերժել այնպէս, որ միջազգային հանրութիւնը չունենայ որեւէ հակափաստարկ: Կարիք չկայ, որ Սերժ Սարգսեանն ինքը մերժի Գիւլի հրահարը: Պէտք է ընդամենը, որ Թուրքիայի հաւաքականի հետ պատասխան խաղից հրաժարուի Հայաստանի հաւաքականը, որն առաւել եւս եթէ սեփական դաշտում ընկերական խաղում Մոլդովային է պարտուում խոշոր հաշուով, ապա պատկերացնել կարելի է, թէ ինչ կը լինի Թուրքիայում: Մերժման այդ տարբերակը միանգամայն հասկանալի կը լինի, այսինքն անառարկելի կը լինի միջազգային հանրութեան համար: Ինչ կարող են ասել Սերժ Սարգսեանին: Չէ որ Գիւլը հրահարել է ֆուտբոլ նայելու: Եթէ խաղը չկայ, ապա ինչպէս կարող են ֆուտբոլ նայել: Ուրեմն մեկնելու առիթն էլ ինքնին վերանում է, քանի որ հրահարը կորցնում է իմաստը:

ՅԱԿՈՒԲ ԲԱԴԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

«ՂԱՐԱԲԱԴԻ ԱՏՐՊԵՅՃԱՆՑԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԼՈՂ»

Ծարունակուած էջ 1-էն

այսօր, չպէտք է լինի յաւերժ»:
Խօսելով ռազմական գործողութիւններու վերսկսման հաւանականութեան մասին՝ Քոչարեանը ըսած է, որ գէնքով անընդհատ Ատրպէյճանն է որ կը վախցնէ: «Նրանք հարցը հետեւեալ կերպ են ձեւակերպում՝ կամ մենք ստանում ենք ամէն ինչ, կամ տարածաշրջանը պատերազմ է ստանում»:
Քոչարեան նաեւ ըսած է թէ, վերսկսելով պատերազմը՝ Ատրպէյճան կը լուծէ Ղարաբաղի միջազգային ճանաչման հարցը:

«Ղարաբաղեան հակամարտութիւնում կայ երկու հիմնական կողմ. դա Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնն է եւ Ատրպէյճանը, որ փորձում էր ուժային ճանապարհով լուծել ինքնորոշուած ժողովրդի ինքնորոշումը: Երբ որդ կողմը, որին ներքաշել են այս հակամարտութեան մէջ, Հայաստանի Հանրապետութիւնն է»:
Նոյն հարցազրոյցի ընթացքին ըսած է Ծաւարը Քոչարեան:
Ան ըսած է, որ պաշտօնական Պաքուն ամէն ինչ կը փորձէ այս հակամարտութիւնը ներկայացնելու որպէս հակամարտութիւն Ատրպէյճանի ու Հայաստանի միջեւ:

ՆՈՐԻ՞Ց ԽԱՂ Է

Լինում է, չի լինում մի փաստաբան: Նա իր արհեստով կարողանում է մեծ գումարներ դիզել, ձեռք է բերում առանձնատներ, մեքենաներ, երեխաներին կրթութեան է տալիս աշխարհի լաւագոյն համալսարաններում: Գալիս է փաստաբանի թոշակի գնալու ժամանակը, եւ նա իր գործը թողնում է որդուն: Երկու շաբաթից որդին ուրախ-ուրախ գալիս է հոր մօտ եւ բացականչում. «Հայրի՛կ, այն գործերը, որոնք դու չես կարողացել զլուխ բերել 20 տարում, ես աւարտեցի երկու շաբաթում»: «Դու չիմարի մէկն ես, պատասխանում է հայրը, այս տները, մեքենաները եւ քո էլիտար կրթութիւնը ես կարողացայ ապահովել հենց նրա շնորհիւ, որ 20 տարի ես այդ խնդիրները չեմ լուծել»:

Այս պատմութիւնը ես միշտ չիչում եմ, երբ խօսք է գնում դարաբաղեան հիմնահարցի մասին: Մենք շատ ենք սիրում բացարձակացնել արտաքին գործերը՝ ճշուններ, պարտադրանքներ, Ռուսաստանն այսպէս է ուզում, Ամերիկան՝ այնպէս եւ այլն: Իհարկէ, այդ ամէնն իր դերն ունի: Բայց որոշիչը հետեւեալն է. եթէ այդ խնդիրը, որից առաջին հերթին տուժում են Հայաստանի եւ Ազրբեջանի ժողովուրդները, ինչպէս նաեւ ողջ տարածաշրջանը, չի լուծուում, ապա դա ձեռնտու է նախեւառաջ երկու երկրների վերնախաւին: Ընդ որում, ամբողջ վերնախաւին՝ մի քանի իմաստով: Իշխանութիւնն այս պայմաններում հարստանում է իր օլիգարխների մենաշնորհների միջոցով, ինչպէս նաեւ սահմանափակում է մարդկանց իրաւունքներն ու ազատութիւնները («Ի՞նչ է, մոռացել էք,

որ մենք փաստացի պատերազմի մէջ ենք»): Ընդդիմութեանն էլ հարցի չլուծուած լինելը մշտապէս հնարաւորութիւն է տալիս խօսելու «յանձնելու», «ծախելու» մասին: Այնպէս որ, Ղարաբաղի հարցում քաղաքական եւ պետական գործիչները բաժանուում են ոչ թէ «դաւաճանների» եւ «հայրենասէրների», «տուրքների» եւ «չտուրքների», «պարտաւորականների» եւ «յաղթողականների», «պատերազմի» եւ «խաղաղութեան» կուսակցութիւնների, այլ շատ աւելի յստակ. ա/ նրանց, ովքեր ուզում են այդ հարցը լուծել, եւ բ/ նրանց, ովքեր դա չեն ուզում: Մնացածը քաղաքական ուսուցողիկ է:

1997-ին ՀՀ առաջին նախագահը ակնյայտօրէն ուզում էր այդ հարցը լուծել, բայց «չուզողները» գեղեցկում էին գրեթէ բոլոր մնացած առանցքային պաշտօնները ու շատ էին իշխանութիւն ուզում: Արդիւնքում 1998-2008 թուականների ընթացքում մեր դիրքերը բոլոր ոլորտներում հասել է թուլացման:

Ներկայիս նախագահը նոյնպէս յայտարարում է ինքնին լուծելու իր ցանկութեան մասին: Բայց կողքից իշխանամերձ շրջանակները կիսաշրջակով ասում են՝ «մի՛ հաւատացէ՛ք, սա խաղ է, ոչ մի բան էլ չի լինելու»: Իբր՝ հանգստացնում են հասարակութեանը: Անձամբ ինձ դա չի հանգստացնում: Եթէ իսկապէս խաղ է, իմիտացիա է, ուրեմն՝ շատ վատ է: Եւս 10 տարի «խաղալ» գուցէ եւ հնարաւոր է: Բայց պէտք է նաեւ տեսնել 10 տարուց այնպիսի:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

ՆՈՐ ԽՈՒՃԱՊ

Մի քանի օր է՝ նորից խուճապ է սկսուել. մթերային խանութներում հերթեր են ու իրարանցում, մարդիկ տանեակ կիլոգրամներով շաքարաւազ եւ ձէթ են առնում: Գուցէ պատճառը մի քանի օրում գների թանկացումն է՝ շաքարաւազը 240-250-ից հասել է 290-300-ի, ձէթի գինը դեռ շատ չի աճել, բայց բոլորը խօսում են այն մասին, որ Սեպտեմբերի 1-ից երկու անգամ թանկանալու է: Եւ դեֆիցիտ ու գները կտրուկ աճ տեսած երեւանցիները սրբում են խանութները: Մենք փորձեցինք հասկանալ, թէ ինչով է բացատրուում այս հերթական բուռը: Վարկած կայ, որ դա պայմանաւորուած է պահածոյացման սեզոնով, երբ մուրաբաների ու այլ պահածոնների պատրաստման սեզոնում շաքարաւազի ու ձէթի սպառումը, որպէս կանոն, աճում է: Բայց մեր տանտիրիւններն ամէն տարի այս սեզոնին ձմրան նախապատրաստութիւններ են տեսնում՝ ինչո՞ւ պէտք է այս տարուայ սպառումն այդքան աճէր ու հանգեցնէր գների արհեստական բարձ-

րացման: Եթէ այս «ափոտաժը» պայմանաւորուած է ֆինանսատնտեսական ճգնաժամի նոր ելեւէջներով, ապա դա էլ շատ արժանահաւատ չէ. կարծես թէ աշխարհում ճգնաժամի յաղթահարման միտումներ են նկատուում, յամենայնդէպս՝ վատթարացման տենդենցներ չկան: Կարծում ենք՝ բացատրութիւնը կարող է լինել շատ աւելի պարզունակ, քան առաջին հայեացքից թուում է: Իր պետութեան եւ իշխանութեան նկատմամբ որեւէ վստահութիւն չտածող, շարունակ վատ լուրեր, վատ գարգացումներ ակնկալող, անընդհատ տենդազին սպասումների մէջ գտնուող հայ ժողովուրդը յոյսը միայն իր վրայ է դնում: Նա գիտի, որ երբ յայտնուի ծայրայեղ վատ կացութեան մէջ, ոչ ոք իրեն ձեռք չի մեկնելու: Ինքը ինքնուրոյն է դուրս գալու ցանկացած ճգնաժամից, ուստի փորձում է սեփական ուժերով իրեն ապահովագրել կարիքից: Ուստի փոքրիկ լուրը կարող է նման խուճապ առաջացնել:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթիթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

2008 ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԵԱԼԻ ԵՒ ՆԵՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ

ՍՈՒՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ

Իր նախագահական գործունեությունն աննախանձելի աւարտեց Ռոբերտ Քոչարեանը՝ ոստիկանական, յատուկ ջոկատային ու զինուորական ստորաբաժանումներն ուղղելով միտինգաւորների դէմ: Հետեւանքը՝ գոհուածներ, վիրաւորներ, թալանուած խանութներ, օֆիսներ, այրուած մեքենաներ, հասարակութեան առաւել խոր առձակատում եւ իշխանութեան նկատմամբ անվստահութեան մեծացում: Զինուած ստորաբաժանումների հետ բնակչութեան նման ընդհարումներ Հայաստանում չէին եղել սովետական իշխանութեան եւ անկախութեան բոլոր տարիներին: Քոչարեանն իր գործունեութիւնն աւարտեց սեւ բծով, որը կը մնայ ժողովրդի պատմական յիշողութեան մէջ:

Ես մինչեւ այսօր չեմ կարողանում հասկանալ 2008 թ. Մարտի 1-ին Երեւանում ընդդիմութեան կողմնակիցներին ցրելու նպատակով Քոչարեանի ձեռնարկած քայլը: Իր ժողովրդի հոգեբանութիւնն իմացող մարդը նման բան չէր կարող անել: Այդ քայլը ոչ թէ քաղաքական գործչի կամքը, խիզախութիւնն ու վճռականութիւնն է ցոյց տալիս, այլ աւելի շուտ նրա վախը ժողովրդից, իշխանութիւնը կորցնելու վախը, նոր քաղաքական ուժերի իշխանութեան գալու դէպքում արածների համար պատասխանատուութեան վախը:

Իր գործողութիւններով Քոչարեանը Հայաստանը սուզեց խառնակութիւնների յորձանուտը: Պատմական փորձն ուսուցանում է՝ ուժային կառուցները չի կարելի վերահսկողութիւնից դուրս թողնել ու ենթարկեցնել մէկ մարդու, նոյնիսկ եթէ նա պետութեան գլուխն է:

Հանրապետութիւնում շատերն են խօսում, որ Սերժ Սարգսեանի նախագահութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ռոբերտ Քոչարեանի երրորդ ժամկէտը: Նորընտիր նախագահին այդ պիտակը պէտք է, այն պետք է պրկել, որպէսզի չխանգարի նրան աշխատել:

Խօսելով Երեւանում ուժային կառուցների հետ բողոքարկուների բախումների մասին, պետք է նշել, որ բախումներ մինչ այդ կանխատեսւում էին ռուսական մամուլի հրապարակումներում: Սոցիալական պայթիւնի գլխաւոր պատճառն այն է, որ հանրապետութեան

2009 թ. Մոսկուայում տպագրուել է հասարակական-քաղաքական եւ պետական գործիչ, դիւանագետ ՍՈՒՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆԻ «Անցեալի ու ներկայի մասին» գիրքը: Տարբեր ժամանակներ Սուրէն Յարութիւնեանը եղել է Դաւիթբենի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ Կենտկոմի բաժնի վարիչ, Գրայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, Գրայկաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւոր, ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի անդամ: Դիւանագիտական աշխատանքների բերումով Սուրէն Յարութիւնեանը եղել է ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոս Մարոկկոյում, Գերագոյն արտակարգ եւ լիազօր դեսպան Բելառուսի Գանրապետութիւնում: Գրքում հեղինակի յիշողութիւններն ու խորհրդածութիւններն են այն իրարարձութիւնների շուրջ, որոնց մասնակիցն է եղել ինքն առաւել քան 50-ամեայ գործունեութեան ընթացքում: Գրքում տրուում են նաեւ այդ իրարարձութիւնների հեղինակային գնահատականները: Այժմ մի հատուած յիշեալ գրքից.

բնակչութեան մեծ մասը խղճուկ գոյութիւն է քարշ տալիս, ապրում է աղքատութեան մէջ, իսկ իշխանական էլիտային մօտ կանգնած ոչ մեծ թուով ընտանիքներ տիրապետում են, ըստ հուլիանի, երկրի ամբողջ ազգային հարստութեանը՝ իրենց ձեռքում կենտրոնացնելով արտահանման ու ներկրման ոլորտում հրամանատարական լծակները:


Հայաստանում անխուսափելի էր սոցիալական պայթիւնը եւ դրսեւորուեց նախագահական ընտրութիւնների ընթացքում կոպիտ խախտումների դէմ բողոքի ձեւով: Բնակչութեան գանգոլածային բողոքի դրսեւորումներն իբրեւ հակահասարակական ուժերի սաղարաններ կայացնելու փորձերը շատ քչերին են հաւատ ներշնչում: Հեռացող նախագահի բռնաքայլի գլխաւոր պատճառն ընդվզման շարժումը ոչնչացնելն էր եւ ոչ մի դէպքում իշխանութեան հնարաւոր փոփոխութիւն թոյլ չտալը, որը հեռու գնացող հետեւանքներ կ'ունենար:

Պայթիւնը հասունանում էր, եւ դա չտեսնել կարող էր միայն նա, ով ոչինչ չէր ուզում տեսնել: Հայաստանեան դէպքերը համոզիչ ցուցահանեցին այն իրողութիւնը, որ հայ հասարակութիւնը տրոհուած է եւ հազիւ թէ հնարաւոր է մօտակայ ժամանակներում խօսել ինչ-որ համախմբման մասին:

2008 թ. նախագահական ընտրութիւնները Հայաստանում եւ չետոյ ծաւալուած իրադարձութիւնները խոր մտահոգութիւնների տեղիք են տալիս: Հայաստանին բնորոշ քաղաքական ու սոցիալական, տնտեսական իրակութիւններն ամբողջութեամբ արտայայտուեցին նախագահական վերջին ընտրութիւնների ընթացքում: Հանրապետութիւնում շատերն են դժգոհ իրենց կեանքից, բաւականին լուրջ

բողոքներ ունեն իշխանութիւններից, եւ այդ դժգոհութիւնը սուր արտայայտութիւն ունի: Միայն կը լինէր պնդել, որ դժգոհ են միայն նրանք, ովքեր ապրում են աղքատութեան գծին մօտ կամ գծից ներքեւ: Բողոքում են եւ համեմատաբար բարեկեցիկ կեանք ունեցողները: Դժգոհութեան պատճառն են կլանայնութիւնը, ամէնուր ներթափանցած կոռուպցիան, իշխանութեան կամայականութիւնները, մերձաւորների, հարազատների ու հայրենակիցների համար բարենպաստ, ջերմոցային պայմանների ստեղծումը բիզնեսում ու այլ ոլորտներում: Խօսքն ինչ-որ առանձին դէպքերի մասին չէ, այլ հասարակութեան ընդհանուր մթնոլորտի, որը չի կարող բնակչութեան համընդհանուր դժգոհութիւնը չյարուցել իշխանութիւնից: Այդ դժգոհութիւնն էլ Հայաստանում ձեւաւորում է բողոքական ընտրազանգուած: Յանուն արդարութեան պէտք է ասել՝ այդ ամէնի մէջ նախ եւ առաջ մեղաւոր է բարձրագոյն իշխանութիւնը, որը Հայաստանի բնակչութեան համար առաջադրում է օտար ու անընդունելի կենսագործունեութեան սկզբունքներ: Իշխանութիւնը գործնականում կորցրել է իրավիճակի վերահսկողութիւնը, որովհետեւ չունի իրականութեան համարժէք ընկալում, հասարակութեան իրական վիճակի, բողոքական տպաւորիչներուժի առկայութեան գիտակցութիւն: Ես դա համարում եմ իշխանութեան հական սխալը, աւելի ստոյգ՝ երանելի ինքնաբաւարարուածութիւնը: Իշխանութիւնն ինքն իրեն ներշնչել է, որ երկրում ամէն ինչ լաւ է, անհանգստութեան ոչ մի նշան չկայ: Բայց իրականութիւնը, պարզուեց, պայթուցիկ է:

Ինչպէս ցանկացած քաղաքակիրթ երկիր, Հայաստանը եւս կառուցողական ընդդիմութեան կա-



րիք ունի: Պատճառները չեմ ցանկանում մանրամասնել, բայց մենք չունենք նման ընդդիմութիւն. քաղաքական ասպարէզում վերստին յայտնուելով՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը գործնականում լրացրեց այդ բացը: Իշխանութիւնը շատ ցաւոտ ընդունեց նրա վերադարձը, քանի որ ընտելացել էր յարմարաւէտ պայմաններին, երբ գործում էր, Տէրը ես եմ, բակլան խաչած եմ ցանում սկզբունքով: Իհարկէ, այդ դէպքում իշխանութիւնն իրեն է ենթարկում ամբողջ հասարակութիւնը, իսկ շարքային քաղաքացին իրեն անպաշտպան է զգում այնտեղ, ուր չինովնիկը, վարչակարգը կարող են անարգել կամայականութիւնների դիմել, քանի որ հակազդեցութիւն չունեն: Ուժեղ իշխանութիւնը չպէտք է վախենայ կառուցողական ուժեղ ընդդիմութիւնից: Միայն այդ պայմանով կարող է նորմալ գործառնել հայկական հասարակութիւնը, չեն լինի քաղաքացիների իրաւունքների ու ազատութիւնների զանգուածային խախտումներ: Մենք, ցաւոք, չունենք, զպտումներ եւ հակաշիւններ, եւ դա յանգեցնում է պետական իշխանութեան առանձին ներկայացուցիչների ամենաթողութեան:

Հայաստանի ներկայ նախագահի համար ընտրարշաւն ու նրա հետեւանքները պէտք է խոր խորհրդածութիւնների առարկայ լինեն՝ հասարակութեան առողջացման գործնական միջոցառումների մշակման նպատակով, վերացնելու այն շեղումներն ու ձեւախեղումներն:

Շարք էջ 7



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX **500-9308** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՅ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



2008 ԹՈՒՎԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԵԱԼԻ ԵՒ ՆԵՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Շարունակում էք 6-էն

րը, որ կան երկրում: Պաշտոնական վիճակագրությունները ընտրական գնումների 48 տոկոսն ընտրության նախագահի օգտին չի քուէարկել, եւ այս թիւը շատ խօսուն է:

Ինձ յաճախ են հարցնում, թէ ինչ կարծիք ունեմ նախագահ Սերժ Սարգսեանի մասին: Այդ ժամանակ ես չիշում եմ հին յոյն բանաստեղծ Մոֆոկլեսին, որն ասում էր, թէ պէտք է երեկոյին համեստ, որ հասկանաս՝ ինչ հիանալի էր օրը: Նրա խօսքերը մի քիչ փոխելով՝ ես ասում եմ. Այդ հարցին ես կը պատասխանեմ վաղը, նկատի ունենալով, որ նրա գործունէութիւնը ճիշտ է գնահատել ըստ արդիւնքների:

Միամիտ է կարծել, որ ուժային կառույցների, ձեռքարկութիւնների եւ գանգուածային քրէական գործերի յարուցմամբ իշխանութիւնը կարող է մարդկանց զսպաշարել հազցնել: Նման քաղաքականութիւնը հեռանկար ունենալ չի կարող: Այսօր Հայաստանը միասնութեան կարիք ունի: Ես վստահ եմ՝ որքան շուտ իշխանութիւնը հրաժարուի քաղաքական հետապնդումներից, ձեռքարկութիւններից, դատավարութիւններից, այնքան շուտ մենք կը գտնենք միասնութեան ճանապարհը: Հասարակութեան կառավարման հնացած ու վտանգաւոր մեթոդներից ձեռքազատուելու ժամանակն է:

Ռոբերտ Քոչարեանն իր եւ իր նախագահութեան ժամանակի մասին բաւականաչափ հակասական տպաւորութիւն է թողել: Չի կարելի հերքել այն ձեռքբերումները, որ հանրապետութիւնն ունեցել է անցած տարիներին: Ժամանակին, դիւանագիտական աշխատանքում լինելով, ես արժանաւ չի մատուցում նրան: Չեմ ուզում, որ ընթերցողը կարծի, թէ վերջին տասնամեակում մեր ժողովրդի ձեռքբերումների հերքման ճանապարհն եմ բռնել: Արուածի մասին շատ է խօսուել եւ գանգուածային լրատուամիջոցներով, եւ իր՝ Քոչարեանի ելոյթներում:

Վերջին տարիներին կեանքը Հայաստանում բարելաւուել է հասարակութեան որոշ խաւերի համար: Բայց չի կարելի մոռանալ, որ ժողովրդի նշանակալից մասնապարտւմ է աղքատութեան գծից ցած: Իսկ եթէ ասում ենք, որ մարդիկ սկսել են առաջուանից աւելի լաւ ապրել, պիտի չիշենք՝ դրանից աւելի վատ հնարաւոր չէր: Տնտեսութեան անկման մակարդակն այնպիսին էր, որ պէտք է գարմանալ այսօրուայ տնտեսական զարգացման տեմպերով: Պատահական չէ, որ աճի տեմպերը մարդկանց կեանքի որեւէ զգալի բարելաւում չեն բերում: Չտեսնել այն, ինչն ան-

հանդուրժելի է, հակասում է մեր բարոյական ըմբռնումներին, աչքերը փակել այն ամէնի առաջ, ինչը խանգարում է առաջ շարժուելուն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ համր համաձայնութեան դիրքորոշում՝ չնկատելու հիւանդագին այտուցները, որ ձեւաւորուել են այս հասարակութեան մարմինն:

Ինչ է թողել Քոչարեանը՝ նախագահի պաշտօնից հեռանալով: Հակիրճ ամփոփենք գործունէութեան արդիւնքները. նա թողել է կլանային-օլիգարխիկ համակարգ, որի դէպքում ժողովրդի հիմնական գանգուածը շարունակում է դեգերել աղքատութեան մէջ, ծաղկում է կոռուպցիան, գործազրկութիւնը մնում է բնակչութեան սարսափելի խարազանը, գիւղերն աղքատութեան մէջ են, եւ լոյսը թունելի վերջում չի երեւում, հանրապետութեան շատ բնակիչներ գոյատեւում են արտասահմանում աշխատող հարազատների օգնութեան հաշուին: Հայ հասարակութիւնը տրոհուած է, սոցիալ-քաղաքական եւ հոգեկան ճգնաժամ է ապրում, որն անկանխատեսելի հետեւանքներ կարող է ունենալ: Հայաստանում հաստատուել է վարչակարգ, որը բաւարարում էր եւ Քոչարեանին, նա յենում էր ֆինանսական օլիգարխիայի ու օլիգարխների վրայ, ովքեր իշխանական յենարան ունէին՝ ի դէմս նախագահի ու նրա շրջապատի:

Հայ եւ ուրիշ շատ տնտեսագետներ կասկածի տակ են առնում մեր վերջին տարիների ձեռքբերումները: Փորձագէտները շրջում են 2000-2008 թթ. Հայաստանի անսովոր տնտեսական յաջողութիւնների առասպելը: Նրանց կարծիքով՝ այդ տարիներին իշխանութիւնը չի կարողացել ուսուրանել նպատակաւոր երթուղի: Այդ պատճառով երկրում շարունակուած է սոցիալ-տնտեսական դեգրադացիան: Արդիւնաւէտ աշխատող մասնաւոր սեփականատիրոջ ձեւաւորման խնդիրը, իբրեւ շուկայական տնտեսութեան առաջատար ուժի, լուծուած չէ: Մանր ու միջին բիզնեսը չի ստացել ոչ իրաւական, ոչ տնտեսական բազա քաղաքակիրթ զարգացման համար: Տնտեսութեան ամբողջ ճիւղեր, կատարուած սեփականաշնորհման արդիւնքում շուկայում ստանալով մոնոպոլ դիրք, նուազեցրել են իրենց արդիւնաւէտութիւնը:

Ակնյայտ ձախողումներից է հասարակութեան սոցիալական անհասարակութեան աճը: Յետխորհրդային տարածքի ոչ մի երկրում չկայ այդքան վիթխարի տարբերութիւն ամենահարուստների ու ամենաաղքատների եկամուտների

Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը կազմակերպած էր մեծ ձեռնարկ մը ի պատիւ մեզի: Ինչպէս ըսի Flus-ի պատճառով յետաձգուեցաւ:

Բայց ինչպէս չտեսնել «Հաճըն տունը»: 20-25 հոգի ուխտաւորի մը նման մտանք «Հաճըն տունէն» ներս, տեսանք վերանորոգուած յարկաբաժինները, «Ինչիսոս ես ախպար» ըսինք իրարու եւ պատմեցինք իրարու ինչ որ գիտենք: Գրեթէ ազգականներ դարձան: Համբուրեցինք գիրար տաք ու ջերմ համբուրներով, երգեցինք Հաճնոյ բարբառով երգեր, յիշեցինք մեր հերոսները, մեր մեծ հայրերն ու մայրերը եւ խոստացանք վառ պահել մեր սէրն ու յարգանքը իրարու հանդէպ, գիրար այցելել յաճախ եւ այդ սէրը փոխանցել մեր զաւակներուն որ է հայրենասիրութիւն, ազգասիրութիւն, եկեղեցասիրութիւն եւ հայ ընտանիք:

Ցաւալի օր մը ունեցայ, պատմեմ: Պէյրութի Հաճըն թաղի բնակիչներ էինք: Մեծամասնութեամբ հաճընցիներ: Մեր փողոցի ետեւի թաղը կ'ապրէին նաեւ Հաճընցի ուրիշ ընտանիքներ: Սօլբեան ընտանիքը, կ'ապրէր նաեւ այդ թաղին մէջ: Վարդիվառը իրենց փոքր տղան, եղբօրս Գրիգորին դասընկերն էր եւ յաճախ մեր տունը կու գար եղբօրս հետ գնդակ խաղալու: Լսեցի որ շատ տարիներ առաջ Արժանթին փոխադրուած էր, ամուսնացած եւ զաւակներու տէր: Կարգ մը մարդոց հարցուցի եթէ կը ճանչնան վարդիվառը, ըսին այո: Մենք քեզի իր հեռաձայնի թիւը կու տանք, քանի մը օրէն հեռաձայնէ իրեն: 3-4 օրեր անցան հեռաձայնի թիւը չունեցայ: Հաճըն տունն էինք, երբ ճիշդ սեղանիս դիմացը նստած էր Սամօն եւ իր կողակիցը

Շաք.բ էջ 18

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախոտովեթու եւ մտնուկներու Թայրափոքարչիք բաժնում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզարի եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վնասումներով պատճառած
վնասումներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՆԱԽԱՐԴԵԱՆ ՈՂՋՈՅՆ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Արմէն-Հայերը իրենց հին աստուածները մեհեանները շուրջ քաղաքներ էին հիմնել, ինչպէս Բագ-արան, Բագ-րեւանդ աստուածների քաղաքները, որոնց սկզբնական «Բագ» արմատը ունենէն «Bog» բառի նմանութեամբ, Հնդեւրոպական մայր լեզուի՝ Սան Սկրիտի, «Աստուած իմաստի բառն է: Հայերը իրենց տոմարի առաջին ամսի՝ Նաւասարդի, երկրորդ տասնորեակի առաջին օրը, այժմեան Օգոստոս ամսուայ 11-ին, հին աստուածների մեհեանների հրապարակներում, սրբազան Արածանիի ակունքների մօտ տօնախմբել էին իրենց Նաւասարդը: Արիացի մեր նախնիները մայրացած հողի բարեկեցիկ երախայրիքը իրենց աստուածներին էին նուիրաբերում Նաւասարդին՝ Օգոստոսի 11-ին, երբ իրենց այգիների ծիածան կապած ծառերը ճարմանդ թեւերով՝ հողին խոնարհած պար էին գալիս, արեւը կարմիր վարսերի ժպտն էր մաղում մարդկանց սրտերի ծովակներին՝ իր կենսուժը ցանելով այնտեղ: Ծինականները, գօրքը հայոց, արքունիքը, իշխանական տները զամբիւղներով մրգեր ու խուրձերով ցորեն գրկած, ծաղկեփունջերով երինջներ ու ցուլեր գուգած, տօնական երթերով գնում էին Տարօն ու Բագրեւանդ գաւառների սահմանազլիի սրբազան Արածանի գետի ակունքների ու Նպատ լեռան ստորոտին կառուցուած Բագարանի տաճար՝ իրենց Նաւասարդը տօնախմբելու: Արամագրի դուստր Անահիտ դիցամօրը նուիրուած՝ մայրութեան, պտղաբերութեան, բերրիութեան պաշտամունքի փառաբանման տօնն էր այն, տօնն էր Աստուածամոր Բէլի դէմ իրենց Նահապետ Հայկի յաղթանակը:

Արեւ աստուծոյ որդիներ՝ արմէնները, լոյսի, մայրութեան հեքիաթի, բնութեան սքանչանքի Նաւասարդեան տօների իրախճանքով էին վառուած: Գողթան երգիչները մեհեաններն էին ծովացնում իրենց բամբիւղների լարերից հոսած հնչիւններով, իրենց հեթանոս աստուածների ուժի փառաբանման երգերով: Անահիտ դիցամօր ոսկեծոյլ արձանի շողերի ժպիտը գրկած՝ արեւի հուրով շաղուած զամբիւղներով հողի բարիք էին ցանում նրա բազմախն: Երինջներ ու ցուլեր էին գոհաբերում իրենց աստուածների մեհեաններում, որոնց տաք արիւնքով ներկում էին իրենց դէմքերը ի նշան մաքրութեան ու նոր կեանքի սկզբնաւորման: Հեթանոսական տիեզերական պաշտամունքով արբեցած ազնուականութիւնները, իրենց կուսութիւնն էին գոհաբերում սիրեցեալ քաջերին՝ արգասաւորութիւնը սրբազործելու համար:

Մեհեանների հրապարակներում, հեթանոսական վայելքի արբեցումն էր թեւածուած: Իրենց իմաստունների թատերգութիւնները, իրենց Հայկ նահապետի Բելի դէմ յաղթական կռիւը, պատերազմում ընկած իրենց Արալի կենդանացումը, Անգեղաց Տորքի առասպելական ուժի խոյանքը, Ասորաց Բարշամ աստուծոյ մարագից Վիշապաքաղ Վահագնի յարգազորութիւնն էին բնականացնում: Գողթան երգիչների բանաստեղծական խօսքի ու երգի տօնահանդէսներ, Արտաշէս Արքայի բազմախն էին աւետում՝

Ո՛ տայր իմն գծու ծխանի,
Եւ գառաւօտն նաւասարդի,

Եւ բացականչում էին՝ «Տեղ ոսկի տեղայր՝ ի փեսայութեանն Արտաշէսի, տեղայր մարգարիտ՝ ի հարսնութեան Սաթենկան»: Եւ ոսկի ու մարգարիտ էր տեղում տիկնանց վրայ: Մեհեանի առաջ Չահեր էին վառուած, Գողթան երգիչները աւետում էին Վահագնի ծնունդը՝ երկնէր երկին եւ երկիր, երկնէր եւ ծիրանի ծով, երկն ի ծովուն ունէր գկարմրիկ եղեգնիկն,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,

Նա հուր հեր ունէր,
Ապա քէ բոց ունէր մօրուս
Եւ աչկումքն էին Արեգակումն:
Ծիրանի հագած արքան էր ժողովուրդի հետ, մեհեանները գրկած նունեհիւների շուրջ պար էին բռնում, նրանց որմերին պայթած նուները, որպէս վառուող Չահեր, իրենց կարմիր լոյսն էին շողում նրանց վրայ: Մի քանի տարիներ առաջ հագար, հագար հայեր իրենց «Գաթաւոր»ով, նախարարներով Արագածը որպէս մեհեան գրկած նրա շուրջ-պարով ցնծացին: Հրապարակների լայն բացուած բացատներում ռազմախաղեր էին՝ նետաձուլութիւն, սուսերամարտ, գօտեմարտ, որոնց յաղթողները պարմանուհիներ գրկած՝ մտնում էին մեհեաններ, Աստղիկի սիրով ու իրենց երկրի հողի ուժի պաշտամունքով օծուելու: Մեհեանների քրմապետները աստուածների Նաւասարդեան պատգամներն էին փոխանցում ժողովուրդին, որ գալիք տարում անձրեւ բերէին իրենց դաշտերին, իրենց երկիրը հեղեղէին տիեզերքի բարիքով, բերքով, լոյս ու կրակ շաղէին այգիներին, իրենց հողիներում ռազմի շեփոնքեր պայթէին: Ուխտատեղի էր մեհեանը, նոր կեանքի փառաբանման արբեցում, աստուածների բազմախները գինիով հեղեղելու սրբատեղի:

Արմէնները հաւատում էին, որ Նաւասարդեան տօներին իրենց աստուածները՝ Մայր Անահիտը, Միհրը, Բարշամինը, սանդարամետը, Վահագնը, Վանատուրը, Տիրը, Նանէն, Աստղիկը, Ծովինարը Արամագրի առաջնորդութեամբ լուգանք էին առնում Արածանիի ու Եփրատի ջրերում, բարձրանում Արարատի, Սիփանի, Նեմրութի, Թոնտրակի գագաթներ՝ դիտելու Նաւասարդեան խաղերը եւ ձիւնէ աստղիկները ու նրանց ճերմակ լոյսը շաղում ժողովուրդի վրայ, որ իրախճանքով արբեցած նրանց սրտերին անդորր իջնէր: Հայ, արեւի ճառագայթներին յենած՝ ճախրիք դէպի մեհեանները քու հին աստուածների, թող քու հողին յորդի նրանց ուժի, լոյսի, կրակի, ռազմի շողերով եւ այն, որպէս հայկեան հուր, լցրու քու մանչերի սրտերին:

Մի իմաստուն հայ հասել է մինչեւ տասներկու հազար տարիների իր արիական ցեղի ակունքներ եւ ուրիշ իմաստուններ դեռ ինչքան հազար տարիներ պիտի գնան՝ երեւի մինչեւ Ադամ ու Եւա: Հայերը իրենց քարէ սրտի՝ Արարատի լանջերից նախնիների քարեղէն գրերն են իջեցրել, որը Եփրատի հոսանքն ի վար տարել էին ծովագերքի դաշտեր, կաւի վրայ մատեաններ գրել, որին Շուժեյ յորինումը անունով են կոչում: Մի հայ իմաստուն տղայ հիմա հայերէն է կարդում այդ գրերը:

Համաշխարհային չեղաշրջում է այն, մարդկային քաղաքակրթութիւնը այդ լեռնաշխարհում է ծնուել, որտեղ առաջինը երկրագործութեամբ էին զբաղուել, կենդանիները ընտելացրել, մետաղներ մշակել, կերպաս գործել, աստուածների տաճարներ կառուցել, երկինքը դիտել: Հայը դաւանելով իր «է» Աստուածը իր հոգու խորաններում շարունակում է պատարագել իր Նաւասարդը, իր Նաւասարդեան խաղերը:

Հայերը, տիեզերքի պաշտամունքի հազարամեակների տօնապատարութիւնների յուշերի կրակը անթեղած իրենց հողիներում, երկիր մոլորակի ամէն պտոյտին՝ Նաւասարդը որպէս խարոյկ բոցաւառել են իրենց շէներում, այն տարել Պարսկաստան, Եւրոպաներ, ովկիանոսից այն կողմի Գոլոմպոսի Նոր Երկիր: Արիացի Արքայից Արքայ Մեծն Տիրարանի հետ այն բերին՝ Զեւսի «Մուսիս» դուստրերի իջեւանած լեռ, Մուսա Լեռ, որի գագաթին փոճած ողիմպոսի լոյսը հեթանոսական արեւներ էր պոթկայցել նրանց սրտերում: Ողիմպիական կրակով վառուած Մուսա Լեռ, որի լանջերին ծաղկած վեց շէները հողը մայրացրին ցորեանի արտերով, ծառեր, ծառեր տնկեցին որպէս «խաչեր» իրենց նախնիներին: Իրենց սրտերում մայրացած հողի կորովով, աստուածների հուրով վառուած գագաթին՝ թշնամու յոխորտանքը այլեցին:

Կրօնափոխ եղած հեթանոս արիացի Մուսա Լեռցիները, իրենց նոր հաւատքի տօները կատարեցին, նրանց գուգահեռ տօնախմբեցին նաեւ՝ կրակի, ջրի, ծաղիկի, ծառի, պտղաբերութեան, մայրութեան հեթանոսական փառաբանումը: Մուսա Լեռան գագաթը իրենց յաղթ բազուկներով վեր պահած վեց գիւղերի ռանչպարները, հեթանոս նախնիների Նաւասարդեան տօնախմբութիւնները կատարում էին նոր հաւատքի տօնի՝ Մարիամ Աստուածածնի վերափոխման օրը, ամենաբարձրադիր լանջում բազմած հէքիաթային Պիթիաս գիւղում: Յովհան Ոսկեբերանի աւերուած վանքի մօտի Սուրբ Աստուածածին եկեղեցում պատարագում էին ու լոյս վառում Մարիամի անբիծ հոգու յաւերժութեանը: Եկեղեցու բակում իրենց աւանդական կերակուր՝ խոշոր կաթսաներով հարիսայ էին եփում, այն բաժանում լուսաւորեալ մի աղջկայ՝ Մարիամի Որդու անմահութեանը որպէս նշխար ու խորհրդանշիչ, ի յիշատակ իրենց նահատակներին: Իսկ յետոյ, հրապարակում վառուող կրակի շուրջ, իրենց նախնիների Նաւասարդեան իրախճանքով էին արբենում: Հրաձգութեան, նշանառութեան խաղեր, ջրախաղեր, ըմբշամարտեր, թմբուկ էին զարկում, երգում իրենց աւանդական երգերը, պար բռնում կրակի շուրջ, իրենց հին աստուածների ըմպելիք՝ գինի խմում, որ իրենց հողիները Բագարանի մեհեաններ թռչէին, Արածանիի ակունքների ջրերով ցողէին սրտերը իրենց: Արիական այս ցեղի հողիներին տիեզերքի անսպառ կենսուժի հուրն է յորդած եւ աշխարհում ոչ մի ուժ չի կարող այն մարել:

Տիեզերական լոյսով վառուած հին աստուածների մեհեաններից «Ցեղին Սիրտը», «Հեթանոս Երգեր», հանապազօրեայ «Հացին Երգը» քաղած վարուժանի՝ Նաւասարդն է գովերգել, նա ապապէս՝ Հաննարդ Հայկեան, Նաւասարեան սա տօներում Արեւափառ,

Այվերածնէ փլատակներէն, եւ փառագոյ քնարդ առ:
Յանուն Ուժին, Յանուն Գեղին,
մտիր մեհեանն աստուածներուն
Չաիր ձեռքիդ՝ քաղմէ քաղիմ
համասփոէ հուր ու արիւն:
Եւ քարճարցուր Անահիտի
ծիծերն ի վեր բաժակդ նուր,
Յետոյ, գոհուող Բերթողներուն
սրտին վրայ լեցուր, լեցուր:
Զի մեմն, յանուն սէրին, սերմին,
հու հիմ ցեղիդ մարմարէ կոյս,
Մեմն գաւակներդ օգոստափառ,
պիտի կերտեմն մոր Արշալոյս:

Տրդատ իմաստուն, դիւցազնական քաջութեամբ թագաւորն հայոց, իր երկրի անկախութիւնը, ինքնուրոյնութիւնը դրացի երկու հզօր պետութիւնների ազդեցութիւնից գերծ պահելու համար, արտօնել էր իր կողմից արգելափակուած Գրիգոր Պարթեւին հայոց աշխարհում քարոզելու Քրիստոնէական նոր հաւատքի ուսմունքը: Գրիգորը քանդել էր հայոց տիեզերական հաւատքի տաճարները՝ Աշտիշատի, Բագրեւանդի, Բագարանի մեհեանները եւ նրանց լացող որմերով կառուցել էր նոր աւատքի եկեղեցիներ՝ էջմիածին, Մշոյ Սուրբ Կարապետ, Առաքելոց, Վարազայ, որպէսզի հայերը շարունակէին գնալ իրենց հին աստուածների մեհեանների վայրեր եւ ժամանակի ընթացքում դաւանէին նոր պաշտամունքը: Հայոց հին աստուածների մեհեաններում փառաբանուած՝ մայրութեան, պտղաբերութեան, ջրի, ծաղկունքի, սիրոյ, լոյսի, ռազմի, կրակի բոլոր տօներին Գրիգոր Պարթեւը նոր հաւատքի պատմուճաններ էր փոխել, ինչպէս Նաւասարդեան տօներին «Վերափոխումն Սուրբ Աստուածանի» տօնը: Մարիամ է եղել Եբրայեցի այն լուսաւորեալ կոյսի անունը, որը Աստուծոյ պատգամով երկնէլ էր Նրա Որդուն, որին էմմանուէլ՝ Յիսուս-Փրկիչ էին անուանել: Մարդացած Որդի Աստուծոյ, որի միաբնութեան մէջ արեւելքի հին եկեղեցիները՝ Հայաստանեայց Առաքելական, Ասորի ու Պղտի, շէշտել էին Աստուածայինը: Յիսուս Քրիստոս (Օծեալ) երկիր մոլորակ էր եկել տիեզերքի իմաստութիւնը ջամբելու մարդկանց, աւետելու սիրոյ, խաղաղութեան, բարութեան, հաւատքի, յոյսի խորհուրդը: Երկիր մոլորակի պտոյտի առաջին հազարամեակի սկիզբին՝ աշխարհը ամբարիշտութեան, անբարոյականութեան, զեղխութեան, այլամերժութեան յորձանուտն էր ընկղմուած եղել եւ Յիսուս իր տիեզերական իմաստութեամբ քաղաքակրթութեան մի նոր դարաշրջան սկզբնաւորեց, որի մարմինը փարիսեցիները եւ դպիրները թէեւ խաչեցին, սակայն, իր հողին եւ սիրոյ իմաստութիւնը չկարողացան սպաննել:

Ըստ Ղուկաս Աւետարանիչի, Տիրամայր Մարիամը եղել է Դաւիթի ցեղից, Յովակիմի ու Աննայի դուստրը, որին երեք տարեկանին ընծայած էին եղել տաճարին: Յովակիմը իր ճանապարհորդութեան ընթացքին այցելած է եղել այդ տաճար եւ, ընդունուած կարգի համաձայն, տարբեր իրերի հետ դրուած իր մուրճը ընտրած է եղել Մարիամ կոյսը, որի հետ նշանուել է: Մարիամը անարատ յղիութեամբ Տիրամայր եղաւ, մայրերը սիրոյ խորհուրդի ոգին, բնութեան յաւերժութիւնն են, մայրերը օրհնութեան աղօթքի համասնուագ են,

**1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday - Saturday
9 am - 8 pm**

MISSION
Wine & Spirits

**825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday - Saturday
9 am - 8 pm**

HUGE SELECTION!

EVERY DAY LOW PRICES!

 Johnnie Walker Red Label \$15.99	 Johnnie Walker Black Label \$19.99	 Johnnie Walker Green Label \$37.99	 Johnnie Walker Gold Label \$47.99	 Johnnie Walker Blue Label \$119.99	 Grey Goose Vodka \$21.99	 Smirnoff Vodka \$8.99	 Absolut Vodka \$14.99	 Skyy Vodka \$8.99	 Ketel One Vodka \$16.99
 Cazadores Reposado \$19.99	 Patron Silver Tequila \$29.99	 Jose Cuervo Especial \$10.99	 Don Julio Blanco Tequila \$29.99	 Don Julio 1942 Tequila \$77.99	 1800 100 Proof Silver \$17.99	 Hennessy VS Cognac \$21.99	 Hennessy VSOP Cognac \$32.99	 Courvoisier VS Cognac \$18.99	 Jacques Cardin VSOP Cognac \$15.99
 Dewar's 12 Years \$17.99	 Dewar's White Label 1.75L \$25.99	 Crown Royal Canadian Whisky \$14.99	 Captain Morgan Rum \$10.99	 Ciroc Vodka \$16.99	 Russian Standard Vodka \$9.99	 Robert Cavalli Vodka \$38.99	 El Massaya Arak \$19.99	 Touma Arak \$12.99	 Noy 5 Years Armenian Brandy \$16.99

*This ad expires on 08/31/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

ԴԵՄՔԵՐ ԵՒ ԴԵՊՔԵՐ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

ԱԻՆՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Բազմավաստակ ուսուցիչ, կրթական մշակ Յովհաննէս Տ. Պետրոսեանը ծնուել էր Իրանի Բուրվարի շրջանի Նասէրաբադ գիւղում 1912 թուին: Տ. Պետրոսեան քահանայի 9-ը գաւակներէից մէկն էր հանգուցեալ Յովհաննէսը:

Փոքր տարիքից սովորում է իրենց գիւղի դպրոցում, իսկ աւելի բարձրագոյն ուսում ստանալու համար փոխադրուում է Արաք քաղաք եւ յաճախում է տեղի ազգային «Շարաֆ» դպրոցը: Աւարտելուց յետոյ նշանակուում է հայոց լեզուի ուսուցչի պատասխանատու շրջանի հայաբնակ գիւղերում: Ապա տարիներ անց փոխադրուում է Արաք, ապա Թեհրան, ուր դասաւանդում է հայկական նորաբաց դպրոցներում եւ ի վերջոյ նշանակուում է տեսուչ «Աբովեան» հայկական տարրական դպրոցում:

Նրա եղբայրներից էր Տ. Գրիգոր Աւ. Քահանան, որն տարիներ ծառայեց Թեհրանի Մաջլիսի թաղամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում: Տէր Հայրը երկար տարիներ ծառայելուց յետոյ հաստատուեց Միացեալ Նահանգներ, ուր եւ կնքում է իր մահկանացուն:

Տ. Պետրոսեան եղբայրները խոշոր ներդրում են ունեցել Իրանահայ կեանքում, կրթական, մշակութային եւ հոգեւոր ապարկէզներում: Նորոգ հանգուցեալ Յովհաննէս Տ. Պետրոսեանը Արաք քաղաքում ամուսնանում է օրիորդ Նանագի հետ, ունենալով երկու գաւակներ: Յովհաննէս Տ. Պետրոսեանը իր կրթական աշխատանքների հետ համընթաց, մօտ յիսուն տարի առաջ սկսում է հրատարակել «Կանթեղ» օրացոյցը, որի էջերը գունագարդ էին, որն մի բացառիկ երեւոյթ էր Իրանում:

Տարիներ յետոյ Յովհաննէս Տ. Պետրոսեանը տկարութեան պատճառով «Կանթեղ» օրացոյցը յանձնում է աւելի երիտասարդ ուժերի, որոնք հրատարակում են բազմազան բովանդակութեամբ: 1965-ին բախտ ունեցայ ծանօթանալու մեծանուն գործչի հետ, եւ մեր սերտ բարեկամութիւնը շարունակուեց մինչեւ նրա կեանքի վերջը: 97 տարեկան հասակում կեանքից հեռացաւ կրթական բազմամեայ գործիչը, իրենից թողնելով լաւագոյն յուշեր եւ կրթական խոշոր վաստակ: Յարգանք իր յիշատակին եւ վաստակին:

ԲԱՐՍԱՍԸ ԵՒ ՔՈՉԱՐԸ

Քալաւա գիւղում 1910 թուականին մի հայ հողագործ Բարսամ Գոլբեանն անուամբ, հրացանով սպանում է Քոչար թորոսեանին, առանց որեւէ հիմնական պատճառի: Ժամանակի շրջանի հոգեւոր առաջնորդ Տէր Խորէն վարդապետը փորձում է կալանաւորել Բարսամին, բայց նա խոյս տալով պատժից, գաղտնի ճանապարհներով փախչում է Գիլան նահանգը եւ թաղանում է կասպից ծովին կից Անգալի քաղաքը:

Մարդասպանը երկու տարի մնում է թաղանում ապա վերադառնում է գիւղ: Բայց սարսափելով Խորէն վարդապետի հետապնդումներից, բնակութիւն է հաստատում Քալաւա գիւղից 10 քիլոմէթր հեռաւորութեան վրայ գտնուող պարսկական մի գիւղում, որի տէրն էր իր պարսիկ մեծահարուստ Սամսամը: Բարսամը ապաստանութիւն է խնդրում Սարսամից:

Խորէն վարդապետը պարսիկ գիւղատիրոջից պահանջում է մարդասպանին յանձնել իրեն: Բայց

գիւղատէր Սամսամը մի խումբ հրոսակների ուղարկում է հայաբնակ Ագնա գիւղը, ալան-թալանի համար: Հայ գիւղացիները դիմադրում են աւազակներին, որի հետեւանքով սպանում են Ուռիանոս եւ Մէոս Աբուլեանները, որոնց դիակները չեն յանձնում հարազատներին: Սակայն Քալաւա գիւղի հայ կռուողները դիմադրում են Սամսամի աւազակներին եւ քշում հայկական գիւղերից:

Տ. Խորէն վարդապետը լինելով ուսահպատակ, բոլորը ենթարկում եւ գործադրում էին նրա հրահանգները որոնք բոլորն էլ ի նպաստ ժողովրդին էին: Բարսամը տարիներ մնալով Սամսամի մօտ ի վերջոյ անցնում է Խոմէյնի գաւառը (Քամարա) գնդապետ Հէշմաթիի մօտ: Նա Քալաւայի տիրոջ փեսան էր: Այդտեղ նա մնում է որոշ ժամանակ: 1918 թուին Խորէն վարդապետը Սուլթանաբադից (Արաք) անցնում եւ հաստատում է Թեհրանում: Վտանգը անցած համարելով մարդասպան Բարսամը վերադառնում է գիւղ եւ սկսում իր հողերի մշակումը:

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ 29 ՏԱՐԵԿԱՆ

Շարունակուած էջ 1-էն

պանծացնող յաղթական տարեդարձները:

«Մասիս» այս րոյորը պարտեցաւ իր ազգային, ընկերային, քաղաքական եւ ժողովրդավարական անշեղ, ուղղամիտ եւ անսակարկ սկզբունքային ուղեգծին:

Որպէս Ա.Գ. Հնչակեան կուսակցութեան օրկան՝ ան ոչ մէկ շեղում արձանագրեց իր գոյութեան քովանդակ պատմութեան ընթացքին:

Ան իր գոյութիւնը խարսխեց մեր ազգային ընդհանրական ձգտումներու նուիրականացման սրբազան նախապարհին վրայ: Ան մնաց իր ժողովուրդին հետ, ժողովուրդին համար եւ ժողովուրդով առաջնորդուող շարաքաթերք: Ոչ մէկ խոչընդոտ, տագնապ կամ մասնակի առանձնաշնորհում կամ հատուածական շահ յաջողեցաւ պատնառ դառնալ արգելակելու կամ շեղելու անոր սկզբունքային խոյանքները:

Ան հաւատարիմ իր սկզբունքային ուղեգծին՝ հետեւողականօրէն մնաց իր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանման պայքարի առաջին դիրքերում վրայ:

Հայոց Ցեղասպանութեան նախապատմութեան հատուցումը դարձուց իր հաւատոյ հանգանակը:

Առաջին օրէն նուիրուեցաւ հերոսական Արցախի ազատագրական պայքարին: Հաւատաց անոր յաղթական ելքին: Արձագանգեց հոն առկայժող դրական նախաձեռնութիւններուն: Համոզում կայացուցած էր, որ Արցախ, որպէս իրաւակցէր տարածաշրջանէն ներս տեղի ունեցող խաղաղարար խրիքաժողովներուն:

Ան միշտ քաջալերեց կրթական, գրական, բարեգործական, գեղարուեստական եւ ազգային ընդհանրական բնոյթի նախաձեռնութիւնները: Նաեւ՝ քննադատեց հասարակական յոռի բարբերք, որոնք կրնային բուլացնել մեր ազգային կառոյցները, յատաշրջութեամբ:


Շնորհիւ անոր ուղղամիտ, հետեւողական եւ սկզբունքային ուղեգծին՝ «Մասիս» շրջապատուեցաւ Քալիֆորնիայ արժանաւոր աշխատակիցներով: Անոնք, իրենց ազգային, ընկերային, քաղաքական, պատմական, մշակութային, գիտական, իմաստասիրական յողումներով, մտորումներով ու պատգամներով մեծ ներդրում ունեցան մեր ընթերցողներու հոգեմտաւոր զարգացման ներս:

«Մասիս» շարաքաթերքի 29-րդ տարեդարձի այս հրաշալի այլ հպարտացուցիչ առիթով, անգամի մը համար եւս պիտի ուզէինք

մեր շնորհակալութիւնները, երախտագիտութիւնը եւ գնահատութիւնը յայտնել «Մասիս»ի շուրջ խմբուած մեր այն րոյոր քանկարժէք աշխատակիցներուն, որոնց շարքին՝ Տոբ. Փրոֆ. Գեորգ Խրոյրեանին, Պատմաբան Աւետիս Փափագեանին, Արժ. Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քիւնյ. Արգումանեանին, գրող եւ Հրապարագիրներ՝ Սահակ Թութեանին, Հայկ Նազգաշեանին եւ Տիգրան Սարաֆեանին, երաժշտագէտներ եւ գրողներ՝ Հենրիկ Անասեանին, Գրիգոր Փիտէնեան, Բժիշկ եւ յողումագիր Սարգիս Գարայեանին, հրապարակագիր Սուրէն Խոստանեանին, Յարութ Տէր Դաւիթեանին, գրող եւ հրապարակագիր Վահան Պահարեանին, արձակագիրներ Անդրանիկ Սարեանին, Արաֆսի Թաթուլեանին, հրապարակագիր Երուանդ Պապայեանին, Սարգիս Վահագնին, Թորգոմ Փոստանեանին, Պողոս Լազիսեանին, Գարուշ Հարեանցին, գրող Նահապետ Մելգոնեանին, Պետրոս Նաւարեանին, Թագուհի Արգումանեանին, արձակագիր՝ Կորիւնին, Աւետիս Նազարեանին, բանաստեղծներ Ներսէս Պալայեանին, Անահիտ Երեմեանին, Արմէնուհի Պոյամեանին, Վլատիմիր Կարապետեանին, Լիլիթ Քէհէեանին, Սիւնակագիր Գարրիէլ Մոյոյեանին, Յակոբ Կակոսեանին, Արօ Պէլեանին, որոնք իրենց աշխատակցութիւններով հարստացուցին անոր քովանդակութիւնը:

Նոյն հոգեկցութեամբ եւ մեծարանքով մեր անմնացող շնորհակալութիւնները եւ գնահատութիւնները կ'արձանագրենք մեզմէ յաւէտ քաժնուած «Մասիս»ի մնացուած այլ վաստակաշատ գործակիցներ, քաղաքական մեկնարան «Մասիս»ի հիմնադիր խմբագիր՝ Տոբ. Յարութիւն Սաղբեանին, գրող, հրապարակագիր եւ քարոյախօս՝ Տ. Վարդան Ա. Քիւնյ. Տիւլկերեանին եւ երաժշտագիտական մեկնարան՝ Անգիմէ Քէշիշեանին, որոնք մնացուած ներկայութիւն դարձան «Մասիս» շարաքաթերքէն ներս: Անոնք իրենց մահով մեծ քաջ մը թողուցին ոչ միայն «Մասիս»էն ներս այլ նաեւ՝ մեր գաղութի հրապարակագրական անդաստանէն ներս, որուն համար կը ցախիմ դառնօրէն:

«Մասիս» յաջողութեամբ պսակեց իր րոյորած 29-րդ ծանր տարին: Ան հպարտ է իր տարեդարձային յաղթանակով, որ նաեւ ազդանշան է նոր երթի, իր առջեւ քացուող աշխատանքի նոր հանգրուանի, որ պիտի կարօտի յաւելեալ նուիրումի, ուժեղ յանձնառութեան, գիտակից հետեւողականութեան եւ վարակիչ հաւատի՝ յանուն ազգի եւ հայրենիքի վերելքին: Բարի տարեդարձ:



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ԾԱԾԱՏԵՍԱԿՆԵՐ: ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՅՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ Բաց է Ծաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքույթներու

(626) 281-1006 (626) 576-1048 910 E. Main Str. - ALHAMBRA, CA

ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ 10 ՊԱՐԶ ՔԱՅԼԵՐ

Մեզմէ ո՞վ բնաւ հարց չէ տուած, չէ գանգատած որոշ ատեններ իր անբախտութենէն. մեզմէ ո՞վ չէ դժգոհած երջանկութիւն գտնելու դժուարութենէն:

Երջանկութիւն փնտռելու արշաւին ընթացքին մեզմէ շատեր թուլութիւն եւ տրտմութիւն զգացին, մինչ ուրիշներ իրենք իրենց փորձեցին համոզել այս տեսակի արտայայտութիւններով. «առողջութիւնս տեղն է, ունիմ տուն, ուրախ ընտանիք, լաւ բարեկամներ եւ գործ... ուրեմն, պէտք է որ երջանիկ զգամ»: Սակայն ուրիշներ որոշած են, որ «երջանկութիւնը արուեստ է» եւ գայն փնտռելու ուղին ինքնին երջանկութիւնն է:

Այսուհանդերձ, մեր կեանքին մէջ որոշ «պարզ եւ դրական փոփոխութիւններ» կրնան մեծ տարբերութիւն լաւազացնել:

1. Շատ խորունկ փնտռելու մի սկսիր.- Բարդ հարցումներուն պատասխան փնտռելու փոխարէն (ինչպէս՝ «ո՞վ եմ ես»), հիմնական հարցերով պէտք է սկսիս, ինչպէս քունի ժամանակը յարմար ժամուն կարգաւորել եւ անդակամտոն կազմաւորել: Այս երկու գործօնները մեծ ազդեցութիւն ունին երջանկութեանը վրայ:

2. Վրդովմունքը պահէ յաջորդ օրուան.- Մարդոց մեծամասնութիւնը կը փորձէ ինդիւրները լուծել պատահած վայրկեանին, հետեւելով այս օրինակին. «Նեղութեամբ մի քնանար»: Սակայն ուսումնասիրութիւնները կը փաստեն, թէ «Չղայնութիւնը պարպել» հասկացողութիւնը «դատարկաբանութիւն» է, վստահեցնելով որ այդ կ'աւելցնէ մեր զգացած վրդովմունքը, մինչ յաջորդ օրուան յետաձգելը կը նպաստէ անոր թեթեւալուծ:

3. Նմանցուր մինչեւ որ նմանիս.- Զգացումները կը յաջորդեն գործերուն: Եթէ տրտում կը զգաս, վարուելու կարծես ուրախ ես եւ այդպէս պիտի ըլլաս: Եթէ մէկը Չղայնացնէ քեզի, լաւ ձեռով վարուելի իր հետ եւ Չղայնութիւնը պիտի անհետանայ: Փորձէ՛. սքանչելի կերպով գործնական ձեւ մըն է այս:

4. Օգտագործէ՛ ձախողութիւնը.- Մարտահրաւիրն ու վերանորոգումը հիմնական ազդակներն են երջանկութեան: Մեր ուղեղը կը ներգործէ անակնկալի ազդակին հետ եւ կու տայ գոհունակութեան զգացումը: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ այն զբօսաշրջիկները, որոնք կ'այցելեն անձանօթ տեղեր, աւելի ուրախ են քան անոնք՝ որոնք միշտ միեւնոյն տեղը կը ճամբորդեն:

5. Ցաւերդ «նուէրներով» մի բուժեր.- Այս տեսակի նուէրներուն հաճոյքը մէկ վայրկեան կը տեւէ, որմէ ետք սակայն յանցանքի կամ ցաւի զգացումը վերատին կը զգաս, անշուշտ տակաւին նկատի չառնելով այս միեւնոյն նուէրին բացասական հետեւանքները: Շատեր կրնան կարծել, թէ գաւաթ մը գինին ցաւը մոռցնել կու տայ քեզի: Կանգ ա՛ն եւ հարց տուր դուն քեզի. »Գինին պիտի փոխէ՞ իրականութիւնը«:

6. Քիչ մը երջանկութիւն գնէ՛.- Միւրեւելու եւ սիրուելու զգացումը դրամով չի գնուիր: Սակայն նիւթականը կրնայ օգնել քեզի երջանիկ զգալու եթէ պէտք եղած ձեռով օգտագործես գայն, ինչպէս օրինակ՝ առողջութեանդ վրայ, ընտանիքիդ անդամներուն հանդէպ սէրը արտայայտելու, բարեկամներուդ հետ ժամանակ անցընելու կամ ասպարէզային կատարողութիւնդ բարելաւելու նպատակով:

7. Մի պնդեր լաւագոյնին վրայ.- Երկու տեսակ որոշումներ կան, առաջինը կրնայ գոհունակութիւն յաւաքացնել, իսկ երկրորդը՝ լաւագոյնին կը սպասէ: Կան անձեր, որոնք կը բաւարարուին լաւ տեսարանի առկայութեամբ, որոշելու համար ո՛ր պանդոկին մէջ պիտի իջեանեն, մինչ կան ուրիշներ՝ որոնք չեն բաւարարուիր եւ պէտք է բոլոր պանդոկները այցելեն մինչեւ որոշեն իրենց համար յարմարագոյնը, երբ արդէն կորսնցուցած կ'ըլլան իրենց ուժականութիւնը եւ ժամանակը: Այսպիսով, դիւրին որոշում տուողները երջանկութիւն կը վայելեն:

8. Մարզանք կիրարկէ՛ լիցքաւորելու ուժականութիւնդ.- Մարզանքը կը բարելաւէ տրամադրութիւնը եւ այս գիտական իրողութիւն մըն է: Խելքդ կրնայ խաբել քեզի ըսելով. «Ես շատ յոգնած եմ», խաբէ՛ գինք ու մարզանք ըրէ թէկուզ տասը վայրկեան:

9. Կը բաւէ գանգատիս.- Որքան գանգատիս այնքան կ'աւելնայ Չղայնութեանդ չափը: Փորձէ՛ վերջ դնել ասոր: Մի ակնկալեր, որ բոլոր գործերը քու ծրագրիդ հիման վրայ կատարուին: Եւ կարեւորագոյնը՝ գործերդ անձամբ կատարէ:

10. Նախաձեռնէ՛.- Ոմանք կրնան խորհիլ, թէ երջանկութիւնը բնածին է... որոշ մարդոց հետ կը ծնի, մինչ ուրիշներ կը զրկուին անկէ: Թէեւ ծինները դեր կը խաղան այս գծով, սակայն երջանկութեանդ 40 առ հարիւրը ձեռքովդ կը կառուցանես: Մտածէ՛ եւ երջանկութեանդ յատուկ ծրագիրը դուն կերտէ:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐՈՒ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱԿԿԱՏԱՆԶ (ԱԻՕՔԱՏՕ)

Բաղդատած միւս պտուղներու հետ ան կը պարունակէ օրկանիզմի համար անհրաժեշտ բոլոր նիւթերը, բացի վիթ. ճ-էն: Ամենաշատ վիթ. է պարունակող բանջարեղէնն է հարուստ է փրոթէինով, երկաթով եւ պղինձով: Մննդային արժէքով համարժէք է միսին: Ճարպերու բարձր պարունակութեան հետեւանքով, մինչեւ 30 առ հարիւրով կը գրգռէ լեղուցքը, արտադրելով լեղի, ծանր եւ իւղով ճաշերէն ետք: Աւկատանձը օգտակար է այն անձերուն, որոն կշիռքի լաւելում պէտք ունին: Օտակար է յատկապէս ապաքինման շրջանին մէջ գտնուող անձերուն: Վերոնշեալ նպատակներուն համար համար, օրական ուտել 1-2 հատ աւկատանձ: Անոր պարունակած շաքարը արագ կը ներծծուի, իսկ փափուկ մասը դիւրութեամբ կը լուծուի ջուրի մէջ, վերածուելով խմելու համար հաճելի հիւթի: Աւկատանձը թելադրելի չէ սննդականոնի հետեւող անձերուն, սակայն օգտակար եւ հաճելի սնունդ է փոքրերու համար: Երկարակեցուեան ձգտողները անպայման սնունդի մէջ պէտք է գայն ընդգրկեն:

ՄԱՐԴԱՐՄԱՏ ԺԵՆՇԵՆ

Չինաստանի եւ Հեռուոր Արեւելքի մէջ գայն կ'օգտագործէին հազարաւոր տարիներ առաջ: Կենսաբանական յատկութիւններով աւելի հարուստ է ձերմակ տեսակը, որը կը պարունակէ ճինսէնջիտներու բարձր տոկոս: Ժենշենը հարուստ է նաեւ եթերաիւղերով, կենսանիւթերով յատկապէս «Պ» խումբի: Ան կը բարելաւէ չիշողութիւնը, կը բարձրացնէ մտային եւ ֆիզիքական կարողութիւնները, կը նուազեցնէ յոգնութիւնը, բարձրացնելով մկանային ուժը: Կը գրգռէ սեռային գործունէութիւնը, պարզեւելով առօրյութիւն Արեան մէջ կը նպաստէ քոլեսթերոլի, թրիկլիստի, շաքարի քանակի նուազումին: Դեղաբույսը հակացուցուած է երիտաներուն եւ արեան գերճնշում ունեցողներուն: Կարելի չէ ժենշենը օգտագործել ամրան տաք ամիսներու ընթացքին:

ԿՈՃՂԱՊՂՊԵՆ (ԶԷՆՃԷՖԻԼ)

Կ'օգտագործուի անոր արմատը, որ ունի կծու համ եւ յատուկ հոտ, շնորհիւ պարունակած էթերաիւղերու: Ան ազդու դարման է յօդացաւերու պարագային: Ճինձը ընդգրկող կերակուրները ցաւազրկիչ դեղահատերու նման կը հանդարտեցնեն յօդացաւերը: Այդ մասին կը հաստատէ հնդկական եւ չինական բժշկութիւնը տակաւին 2500 տարի առաջ: Կը պարունակէ ճինձերու կոչուող նիւթը, որը ունի ասփիրինանման ազդեցութիւն, ան լեղամուղ է, կը բարելաւէ մարսողութիւնը, կը զօրացնէ արական սերմնաբջիջները, կը բարձրացնէ սղամարդկանց սեռային կարողութիւնը: Անոր հետեւողական օգտագործումը սնունդի մէջ, կը կանխէ քաղցկեղային բջիջներու աճը: Կ'օգտագործուի որպէս համեմունք թարմ եւ փոշի տեսակով: Ծովային հիւանդութեան ժամանակ կ'ընդհատուի մը թարմ ճինձը

առանց ծամելու, որը կը կանխարգիլէ փսխուքը: Ընդդէմէնք եփելու ժամանակ աւելցնելով կոնդապոլպեղի փոշի, կը կանխենք կազերու առաջացումը: Ինչպէս թարմ, այնպէս ալ փոշի կոնդապոլպեղով թէյը օգտակար է պաղառութեան եւ հարբուխի ժամանակ:

ՏԵՐԵԻԱԻՈՐ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐ

Հազար - Անոր կանաչ, նուրբ տերեւները կը պարունակեն բոլոր յայտնի կենսանիւթերը եւ շատ միքրօ-էլէմաններ, փրոթէին, շաքար, ազօթային նիւթեր: Յատկապէս հարուստ է երկաթով եւ մակնեղիումով: Հազար կը բարձրացնէ ֆիզիքական աշխուժութիւնը, կը վանէ յոգնութիւնը, կ'ամրապնդէ սիրտը եւ ջղային համակարգը: Պարունակած ֆոլաթթուի եւ լակտուցիի շնորհիւ ունի լեղամուղ եւ հանգստանցող ազդեցութիւն: Օգտակար է շաքարախտ ունեցողներուն, իսկ ճարպակալման ժամանակ անփոխարինելի է պարունակած ցած ջերմութի շնորհիւ: Հոյակապ միջոց է սննդականոնի հետեւողներուն, շատ դիւրամարս է: Փոլաթթուի շնորհիւ օգտակար է սիրտ-անօթային հիւանդութիւններով տառապողներուն, կը նպաստէ մարմնէն քոլեսթերոլի հեռացմանը: Անփոխարինելի է աւիթամինոզներու ժամանակ, իր պարունակած բնական դիւրամարս կենսանիւթերու շնորհիւ: Օգտակար է ստամոքս-աղիքային հիւանդութիւններով տառապողներուն համար, պարունակած փէքթինի շնորհիւ, սակայն հակացուցուած է աղիքային կազեր՝ մեթերիզմ ունեցողներուն: Աթերոսկլերոզի պարագային, խմել օրական երեք քառորդ գաւաթ հաւասար քանակով հազարի, ստեպղինի եւ շոմինի հիւթերը օրը 3 անգամ: Անքնութեան եւ գրգռուած վիճակներու ժամանակ բարեբար ազդեցութիւն կ'ունենայ հազարի թարմ հիւթ խմելը, որու օրական 1-2 ճաշի դրակը, կը բարելաւէ բունը եւ ինքնազգացողութիւնը:

ԱԶԱՏՔԵՆ - Եթէ օրական ուտենք 3 ճաշի դրակ մանրացած ազատքեղ կամ խմենք մէկ ճաշի դրակ անոր հիւթը, մարմինը կը ստանայ կենսանիւթերու եւ հանքային աղերու ամբողջական կազմ: Ազատքեղի եփուկը կ'աշխուժացնէ միզարտադրութիւնը, ունի լեղամուղ յատկութիւն: Չայն օգտագործել աղցաններու հետ, նախընտրելի է չուտել ստեպղինի, բազուկի եւ շոգամի հետ: Ազատքեղը հարուստ ըլլալով բջջանիւթով, ընդունակ է մարմինը մաքրելու ծանր մետաղներու աղերէն, թափօններէն, կանոնաւորելով ստամոքսաղիքային համակարգի աշխատանքը:

ԿԱՐՈՍ (ՔԻՐԷՎԻՉ) - Հում կարոսի արժէքաւոր յատկութիւնն այն է, որ կը պարունակէ մեծ տոկոս գործօն օրկանական ստիւում, որը լուծելու վիճակի մէջ կը պահէ քալսիւմը: Այս պատճառով, կարեւոր է այն անձանց համար, որոնք մշտապէս կ'օգտագործեն հաց եւ օսլայ պարունակող ուտելիքներ: Ան կը բարձրացնէ աշխատունակութիւնը, սեռային գեղձերու գործունէութիւնը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax :-----

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԷՆ ԱՅԼԱԶԵԱՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՈՍԿԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Օգոստոսի 23-ին Լեհաստանում աւարտուեց Եւրոպայի բռնցքամարտի երիտասարդական առաջնութիւնը: Եզրափակիչում սպասելիքները գերազանցեց Կարէն Այլազեանը (51 կգ, Երեւան): Ոսկէ մետալի համար պայքարում նա մրցեց Գրիգորի Նիկոլայչուկի (Ռուսաստան) հետ եւ 7:1 հաշուով տպաւորիչ յաղթանակի հասաւ:

Նորընծայ ախոյեան Կարէն Այլազեանը մարզում է երիտասարդ մասնագէտ Արման Յարութիւնեանի ղեկավարութեամբ, ան իր տպաւորիչ ելուցիւթներով արժանիօրէն նուաճեց Եւրոպայի ախոյեանի տիտղոսը:

Քաջային միւս կարգերում Եւրոպայի ախոյեանի տիտղոսը նուաճեցին էլւին Մամիզադէն (48 կգ, Ատրպէյճան), Ռադմիր Աբդուլազիմովը (54 կգ, Ռուսաստան), Մարտին վարդը (57 կգ, Անգլիա), Էվալդաս Պետրասկասը (60 կգ, Լիտվա), Ալեքսանդր Բեսպուտինը (64 կգ, Ռուսաստան), Յասոն Քուրիլեյը (69 կգ, Իռլանդիա), Տիրոն Ջոյզեն (75 կգ, Գերմանիա), Եւգենի Տիշչենկոն (81 կգ, Ռուսաստան), Ալեքսեյ Եգորովը (91 կգ, Ռուսաստան) եւ գերծանր քաջային Դինո Մանսուրը (Խորվաթիա):

Լեհաստանում ուինգ դուրս եկան Հայաստանի 8 բռնցքամարտիկներ: *****

Սիրողական բռնցքամարտի միջազգային ասոցիացիայի կողմից հրապարակուած վարկանիշային ցուցակում Հայաստանի բռնցքամարտիկները տեղ են զբաղեցրել լաւագոյն տասնամեակում:

Այսպիսով՝ 60կգ քաջային Հրաչեայ Զաւարեանը 1250 միաւորով 6-րդ տեղում է իր քաջային կարգում, 2150 միաւորով այս քաջային կարգում 1-ին տեղում է քուպացի Եուրդանիս Ուզարը: 48կգ քաջային, Եւրոպայի ախոյեան Յովհաննէս Դանիէլեանը 1150 միաւորով 8-րդ տեղում է իր քաջային կարգում, 1-ին տեղում է կուբացի Ուզո Սիմասը: 75կգ քաջային Անդրանիկ Յակոբեանը՝ 750 միաւորով 17-րդ տեղում է, 69կգ քաջային Սամուէլ Մաթեոսեանը՝ 400 միաւորով 51-րդ տեղում է, 54կգ քաջային Արթուր Համբարձումեանը 250 միաւորով 64-րդ տեղում է: Ցուցակը հրապարակուել է Սեպտեմբերի 1-12-ը Միլանում կայանալիք բռնցքամարտի աշխարհի առաջնութեան նախաշէմին:

«ԳՐԱՆ ՊՐԻ» ՇԱԽՄԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ ԼԵՒՆ ԱՐՈՆԵԱՆՆ Է ԶԵՐՍՈՒԿՈՒՄ ԼԱԲԱԳՈՅՆԸ ՎԱՍԻԼԻ ԻՎԱՆՉՈՒԿՆ ԵՐ

Օգոստոսի 23-ին աւարտուեց Զերմուկի «Գրան Պրի» ծրագրով շախմատի միջազգային մրցաշարը:

Վերջին՝ 13-րդ փուլում Լեւոն Արոնեանը (Հայաստան) յաղթեց Էռնեստո Ինարկիլեւին (Ռուսաստան) եւ Բորիս Գելֆանդի (Իսրայէլ) հետ 8-ական միաւորով բաժանեց 2-րդ, 3-րդ տեղերը: Հայաստանի 2-րդ ներկայացուցիչ Վլադիմիր Յակոբեանը պարտութիւն կրեց Վասիլի Իվանչուկից (Ուկրաինա), վաստակեց 5 միաւոր եւ նոյն արդիւնքն ունեցող Դմիտրի Եակովենկոյի (Ռուսաստան) հետ բաժանեց 11-12-րդ տեղերը: 8,5 միաւորով մրցաշարի յաղթող ճանաչուեց Վասիլի Իվանչուկը:



«Գրան Պրի» ծրագրով Զերմուկի ստուգատեսը թուով 5-րդն էր: Քանի որ Արոնեանը յաղթող էր ճանաչուել Գրան պրիի նախորդ երկու մրցաշարերում՝ վաստակելով 360 միաւոր, ուստի Զերմուկում ցոյց տուած արդիւնքը լիովին բաւարար էր ընդհանուր հաշուարկով 1-ին տեղը զբաղեցնելու եւ միւս տարի կայանալիք աշխարհի ախոյեանի կոչման յաւակնորդներին մրցաշարին մասնակցելու իրաւունք ստանալու համար:

Զերմուկի Գրան-պրի շախմատի մրցաշարային աղիւսակը հետեւեալ վերջնական տեսքն ունի՝ 1. Վ. Իվանչուկ՝ 8,5, Լ. Արոնեան՝ 8, 3.Բ.Գելֆանդ՝ 8, 4.Ռ.Ղասիմջանով՝ 7,5, 5.Պ.Լեկո՝ 7,5, 6.Ն. Ալեքսեւ՝ 7,5, 7.Ս. Կարյակին՝ 7, 8.Պ. Էլիանով՝ 6,5, 9.Է. Բաքրո՝ 6, 10.Գ. Կամսկի՝ 6, 11.Դ. Յակովենկոն՝ 5, 12.Վ. Յակոբեան՝ 5, 13.Է. Ինարկիլեւ՝ 4,5, 14.Ի.Զեպարինով՝ 4 միաւոր:

ԱՊԱՔԻՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ՓԻԹՐՐ ՄԱԼՃԵԱՆ սրտի վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած ըլլալով այժմ կը բոլորէ ապաքինման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ անակնկալ մահուան առթիւ Փասատինայի Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Թամար Օտապաշեանին, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար Յովհաննէս եւ Այտա Խոճիկեանին: ***

ՄԻՀՐԱՆ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ դառնաղէտ մահուան առթիւ Ս.Դ.Հ.Կ. «Սեդրակ Շահէն» մասնաճիւղը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Յովհաննէս Խոճիկեանին: ***

ՄԻՀՐԱՆ ՕՏԱՊԱՇԵԱՆԻ մահուան տիտղոս առթիւ Sahara ճաշարանի տէրեր՝ Գրիգորեան եղբայրներ ցաւակցութիւն կը յայտնեն ողբացեալի հարազատներուն ու ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Այտա Խոճիկեաններուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆուտպոլի Հայաստանի բարձրագոյն խմբի առաջնութեան 19-րդ տուրում կենտրոնականը «Միկա»յի եւ «Ուլիս»ի մրցավէճն էր: Յամառ մրցակցութեան ելքը վճռեցին «Միկա»յի լեգեոնականներ Բոտի Դեմէլի եւ Էդնէյի խփած երկու անպատասխան կոլերը:



«Փիւնիկ»ին նախորդ տուրում յաղթելուց յետոյ «Արարատ»ը կարող էր առաւելութեան հասնել նաեւ «Բանանց»ի նկատմամբ: Երկու խումբերը անառիկ պահելով սեփական դարպասը: Գրանցուեց ոչ-ոքի:

«Փիւնիկ»ը կապանում 2-0 հաշուով առաւելութեան հասաւ «Գանձասար»ի նկատմամբ: Գիւմրիում «Շիրակ»ը «Կիլիկիայ»ի հետ մրցավէճում չկարողացաւ պահպանել յաղթական հաշիւը: Խաղաւարտից 5 րոպէ առաջ հիւրերից Հայկ Մկրտչեանը վերականգնեց հաւասարակշռութիւնը:

Մրցաշարային աղիւսակ

	Խ	Ղ	Ո	Պ	Գ	Ս
1. Փիւնիկ	19	13	5	1	35-8	44
2. Միկա	19	13	2	4	42-20	41
3. Ուլիս	19	11	3	5	30-14	36
4. Բանանց	19	10	2	7	27-19	32
5. Գանձասար	19	8	2	9	15-26	26
6. Շիրակ	19	3	7	9	16-37	16
7. Կիլիկիա	19	3	3	13	14-30	12
8. Արարատ	19	1	4	1	8-33	7

BUSINESS FOR SALE

ԾԱԽՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՐԱՏՈՒՆ

Armenian Grocery, Meat & Deli for sale. \$120,000. 1,800 sq ft in the heart of Burbank. Steady sales, chiller, meat counter & equipment alone is worth the asking price. Owner also selling Water & Ice store in Glendale – coffee, teas, soda, snacks. Asking \$40,000 - makes \$2,000 a month profit. Contact Mary Sanchez - 310-539-8300

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ 1060 North Allen Avenue Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով (200-էն մինչեւ 450 sq. feet) Դետաքրքրուողներէն հեռածայնել՝ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

REQUEST FOR PROPOSALS (RFP) NO. 7519 ENVIRONMENTAL CONSULTING SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified environmental consultants to provide services related to lead-based paint, asbestos, and other hazardous substances.

The work to be accomplished includes: testing for lead-based paint (LBP) through the use of an X-ray fluorescence (XRF) device or through the use of bulk paint chip sampling; testing dust for the presence of lead through the use of wipe sampling; testing the soil for lead content; testing for the presence of asbestos containing materials (ACM); testing for the presence of other hazardous substances (OHS); laboratory analysis; performance of LBP risk assessments; design of methodologies and specifications for LBP, ACM and OHS abatement; and monitoring at sites during the LBP, ACM and OHS removal process to ensure compliance with all applicable federal, state and local laws, regulations, guidelines and technical specifications.

Proposals will be accepted at 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m., (local time) September 4, 2009. Offers received after this date and time may, at the discretion of the Authority, be rejected without consideration.

Instructions for preparing your RFP are contained in the RFP and is available at www.hacla.org/psor call (213) 252-5405 or 252-1832 for a copy of the RFP. Questions of a procedural nature may be directed to John Price, Contract Administrator at (213) 252-5416 or by e-mail John.price@HACLA.org

A pre-proposal conference to discuss the RFP and answer questions will be held at 2:00 p.m., August 18, 2009, in the Authority's 5th floor Board of Commissioners meeting room at 2600 Wilshire Boulevard, Los Angeles. 8/20, 8/27/09 CNS-1664274# MASSIS WEEKLY

2008 ԹՈՒԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 7-էն

Քոչարեանը լաւ իւրացրեց դեկավարի արտաքին յայտանիշները՝ կոստիւմներ, փողկապներ, վերնաշապիկներ, պահուածք: Բայց նրա մէջ չկար գլխաւորը՝ մասշտաբային մտածողութիւնը, ազնուազարմութիւնը, անկեղծութիւնը: Նրա մասին ինձ հետ շատերն են խօսել իբրեւ եսասէրի, կոռուժպացուած-կլանային ֆիզուրի: Երեւանում, իւրացնելով քաղաքական խաղերի այբուբենը, նա կարծում էր, որ արդէն Աստուծոյ հետ էլ է լեզու գտել եւ հասել է պետական շինարարութեան, քաղաքականութեան ու դիւանագիտութեան հարցերի բարձրագոյն ընկալման: Քաղաքականութեան մէջ ամենասարսափելին այն է, երբ լիդերը, ուրիշների կշիռը չափելիս, մոռանում է երկրում իր սեփական կշիռի մասին: Նկատի ունենալով ոչ թէ պետութեան դեկավարի պաշտօնի կշիռը, այլ նրա իրական հեղինակութիւնն իբրեւ անհատականութեան, նրա կշիռը հասարակութեան մէջ:

Իշխանութիւն կրողի շուրջ յաճախ ձեւաւորուում է շքախումբ ոչ անշահախնդիր համախոհներից, գործընկերներից, որոնք օգուտ են քաղում պետութեան դեկավարի մերձաւորի իրենց դիրքից: Քոչարեանի կլանի մերձաւորներն արագ հասկացան ու իւրացրին բոլոր կենսական կարեւորութիւն ունեցող, շահաւէտ որոտները՝ բենզինի, սիգարետի, մաքսային, դեղագործական, հացի, տրանսպորտի, շինարարական: Բռնազաւթուե-

ցին հացը, վառելիքը, լոյսը, ջերմութիւնը, ջուրը, շինարարութիւնը: Մակերեւոյթի վրայ յայտնուեցին ոչ քիչ գանձագողեր, կաշառակերներ, տարատեսակ սրիկաներ, որոնց կեանքի սկզբունքը դարձաւ՝ քանի հնարաւորութիւն ունես, իւրացրու: Հեղինակաւոր փորձագետների կարծիքով՝ Քոչարեանի կառավարման տարիներին Հայաստանից ստուերային ճանապարհով միլիոնաւոր դոլարներ են հոսել արտասահման: Մի բանում Քոչարեանը, անկասկած, հասել է յաջողութեան՝ տնտեսութեան հիմնական ակտիւները եւ ֆինանսական հոսքերը վերցուել են կոշտ եւ բնաւ ոչ անշահախնդիր վերահսկողութեան տակ:

Յաւուր, Հայաստանի նորագոյն պատմութեան քոչարեանական փուլը չի աւարտուել, այդ լաբիրինթոսից հեշտ չէ դուրս գալ, ժամանակ է պէտք:

Իհարկէ, Քոչարեանը շատ սխալներ է գործել, ոմանք համոզուած են՝ նոյնիսկ յանցագործութիւններ: Պատահական չէր եւ նրա նախագահական գործունէութեան արիւնտ աւարտը 2008 թ. Մարտին: Նրա համար հիմա կարեւոր է, թէ ինչ գնահատական կը ստանա հայոց պատմութեան մէջ: Հայերի համար, համարձակուած եմ յայտարարել, նախագահական պաշտօնում իր վերջին ակորդից յետոյ, Քոչարեանը դարձել է հայոց պատմութեան, ինչպէս ռուսական առածն է ասում՝ «կաղ պապիկ», անկախ նրանից, թէ իր համար ինչ պաշտօն կը սակարկի: (էջ 342-348):

ԱՐԺԱՆԹԻՆԵԱՆ ԽՈՒՆԵՐ

Շարունակուած էջ 13-էն

Անի Մուշեանը: Սամօս Լիբանանէն էր եւ Շարժում Հնչակեան օրկանի խմբագիրը Արժանթինի մէջ: Բարեկեցիք, ըսաւ. ես քեզի կը ճանչնամ դուն Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան անդամուհի էիր, ըսի այդ, բայ շատ չչիշեցի գինք: Քիչ էտք քովը նստողին դարձաւ ու ըսաւ. «Երէկ ալ, խեղճ վարդիվաւին դամբանականը ես խօսեցայ»: Հազիւ լսեցի վարդիվաւ անունը իրեն դարձայ հարցուցի ո՞ր վարդիվաւը:

Օ՛հ ըսաւ Հաճըն թաղէն էր: Վարդիվաւ Սօլաբեանը, այդ ըսաւ: Երկու օրեր առաջ վարդիվաւ Սօլաբեանը սրտի կաթուածով մահացած էր: Այդ օր ես կը գտնուէի ճիշտ եկեղեցոյ փողոցին դիմացը viejo ակումբը, ճաշարանը, երբ տեսայ որ դազադակիրներ ուսամբարձ աստիճաններէն վեր կը հանէին դազադը, դարձայ Տէր Հայրին արդեօ՞ք որ հայն է: Յաջորդ երկու օրերուն «Հաճըն Տունին» մէջ իմացանք որ մեռեալը վարդիվաւն էր, մեր դրացի կատակասէր, աշխոյժ, գործունեայ տղան: Առանց իմանալու որ ո՞վ էր մեռեալը մըմնջացի «Աստուած հոգին լուսաւորէ»:

Ի՞նչ վարդիվաւներ հեռացան, մենք ալ հեռացանք, ի՞նչ ճակատագիրներու ենթակուցան: Ի՞նչ յուշեր արթնացան: Մանկութիւն, դպրոց, եկեղեցի, երգ, պար արտասանութիւն:

ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐՈՒ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 17-էն

Թիւնը, ունի միզամուղ յատկութիւն: Հարուստ է վիթ. ձ, Պ 1, Պ 2, Փ, եւ միքրօ-էլէմաններով, կը պարունակէ նաեւ փոթասիտում քալսիում, ֆոսֆոր: Կարոսը ոչ միայն համեղ է, այլ նաեւ շատ առողջարար: Կը գրգռէ ախորժակը, կ'ուժեղացնէ ստամբոսաքլին արտադրութիւնը, կ'արգիլէ կազերու կուտակումը ստամբոսի եւ աղիքներու մէջ:

ՓՐՓՐԵՄ (ՍԷՄԻՉՕԹՈՒ) Անոր հաստ եւ մսոտ տերեւները եւ դալար ցողունները հարուստ են վիթ. ճ-ով, հանքային աղերով, տաղապանիւթով: Ան հարուստ է օմէկա-Յ ճարպաթթուներով, որոնց դերը մեծ է առողջութեան համար: Ան միզամուղ է, օգտակար միզասեռական օրկաններու բորբոքումներու ժամանկ: Փրփրեմը ունի նաեւ լեղամուղ ազդեցութիւն, տերեւներու թուրմը կ'օգտագործուի լեղուղիներու բորբոքումներու պարագային: Ան օգտակար բանաջարեղէն է շաքարախտով հիւանդներուն համար:

ՇԻՄԻՆ Յրտադիմացկուն, ածխաջրատներով, փրոթէյնով, վիթ. ձ, Ա, Պ-թով, հանքային աղերով հարուստ բանաջարեղէն է, որ շատ օգտակար է սակաւարիւնութեան, երկաթի անբաւարարութեան, տեսողութեան տկարութեան եւ հակուրութիւն ունեցողներուն համար: Կը բարելաւէ աղիքներու շարժողականութիւնը, կ'ամրացնէ ջղային համակարգը, կը կանխարգիլէ լիններու բորբոքումը: Շիմին չի յանձնարարուի երկիւկամի հիւանդութիւններ, շաքարախտ, պալարախտ ունեցող հիւանդներուն, ինչպէս նաեւ

Բոլորը ետին ձգեցինք ու փորձեցինք այս աշխարհներու մէջ հայ մնալ, հայ դաստիարակել, հայու հոգի տալ: Չեմ գիտեր ո՞ւր կը տանի մեզ այս ճանապարհը: Փորձենք մեր կարելին ընել, տանք բարին, ճշմարիտը, գեղեցիկը:

15 օրուան կեցութիւնս Արժանթինի մէջ եղան ուրախութեան, յուզումի, երջանկութեան, մտահոգութեան օրեր:

Հարիւր հազար հայեր կ'ապրին Արժանթինի մէջ: Իմս, հայ կեանքը ներկայացնել չէ, որովհետեւ չես կրնար քանի մը օրուան մէջ լուրջ պատկերը տալ հայութեան: Գիտեմ որ մեր ազգականները, Ռեզեան, Թաթուեան, Արսլանեան, Մավիլեան, Թապագեան ընտանիքներ, գուրգուրանք եւ սէր յայտնաբերեցին մեզի: Ըսին մենք ձեզ ոչ միայն սիրեցինք այլ սիրահարուեցանք ձեզի:

Արժանթինը, հայը, ազգականները, հաճընցիները, բոլոր այնքան հարազատ դարձած որ կ'ուզեմ դարձեալ այցելել զիրենք, միայն այս անգամ կ'ուզեմ որ ըլլայ արեւոտ ու զարնանային օդ եւ առողջ մթնոլորտ:

Իմ արուրդ ու հայու հոգիով տառապող ու հաճընցիական ոգիով լեցուած հարազատներս որ այս գեղեցիկ առիթը ընծայեցին, թէեւ կարճ ժամանակով սակայն սքանչելի օրեր պարգեւեցին մեզի:

Շնորհակալութիւն
«Հէճնօ տեղը եայլօ է,
«Հէճընցիք թիւմ Աղօ են:

ՆԱԿԱՍԱՐԴԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Շարունակուած էջ 14-էն

պատարագ են: Մարիամը ծնել էր նաեւ ուրիշ գաւակներ, որոնցից Յակոբ, Տեառնեղբայրը, Յիսուսի աշակերտներից մէկն էր եղել: Պատմիչները աւանդել են, որ Մարիամի պաշտամունքը առնչուած է եղել բնութեան զարթոյնը ու պտղաբերութիւնը խորհրդանշող դիցաւայրերի՝ Իգիտա, Մա, Իշտար եւ ինչու չէ նաեւ հեթանոս հայերի Մայր Անահիտ դիցուհու պաշտամունքների ազդեցութեանը: 431 թուականն, Եփեսոսի Քրիստոնէական Տիեզերական Ժողովը Մարիամին հուշակել էր Աստուածամայր, որի երկրպագութիւնը այնուհետեւ տարածուել է Քրիստոնէական աշխարհում:

Հայերը Մարիամի փառաբանման տօնը անուանում են «Վերափոխումն Սուրբ Աստուածածնի» եւ այն տօնում Օգոստոս ամսուայ 12ից 18ի միջեւ ինկած առաջին կիրակին: Հայոց գրաբար ոսկեղնիկ լեզուով «Վերափոխումն» նշանակում է վեր, դէպի երկինք փոխադրուիլ, կամ ննջում ու մահ: Ըստ Աւետարանիչների վկայութիւնների, երեք օրեր շարունակ Գեթսեմանիի ձորակի մօտիկ Մարիամի գերեզմանին երկինքն էր իջել իր լոյս աստղերով, հրեշտակները արեւը որպէս ջահ բռնած, սաղմոսներով ու երգերով փառաբանել էին նրան: Բարթողիմէոս Առաքեալը, ներկայ չէր եղել Մարիամի թաղման արարողութեանը: Մարիամը կանխագալով որ նա շատ պիտի տխրէր, իր կենդանա-

գիր նկարը տալիս է իր խնամատար Յովհաննէս Առաքեալին՝ յետագայում այն նրան յանձնելու համար: Բարթողիմէոսը վերադարձին ընդունում է նկարը, սակայն Մարիամի դէմքը վերջին անգամ տեսնելու համար, խնդրում է բացել նրա գերեզմանը: Ի գարնանս բոլորի, այն դատարկ էր եղել, Մարիամը «Վերափոխուած» է եղել երկինք բարձրացել իր Որդու մօտ: Բարթողիմէոս Առաքեալը Մարիամի նկարը իր հետ Հայաստան էր տարել եւ այն պահած եղել Անձեւաց գաւառի Դարբնոց Քար կոչուած վայրը, որտեղ վանք էին կառուցել եւ նկարը ամփոփել պատի մէջ:

Հայոց Հայրապետները, Յիսուս պատգամի խորհուրդը յաւերժացնելու համար, խաղողի օրհնութեան «խաղող Օրհնէք»ի ծիսակատարութիւնը սահմանել էին կատարելու Մարիամ Աստուածանի տօնի օրը, որ հնձաններում եռացող գինին հոսի իրենց սրտերում որպէս արիւնը Նրա Որդու, որ հայոց բանաստեղծների հոգիներին ներշնչման հուր կաթի: Աստուած էր Նոյին որթատունկ տուել, որ այն տնկէր Արարատի ստորոտին: Հայերը խաղողը համարել են տիեզերական արարչութիւն, եւ աշխարհում միայն իրենք են այն օրհնում՝ որպէս Յիսուսի արեան խորհրդանիշ, որպէս իրենց հեթանոս աստուածների ըմպելիք, որպէս ստեղծների ըմպելիք, որպէս նաեւ օրհնութիւն յայգինների բերքառատութիւնը եւ այնտեղ արդէն հասունացած խաղողի բերքի աղէտներից պահպանումը:

ստամոքսի եւ 12 մատնեայ աղիքի բորբոքումներու ժամանակ: Շիմինով կը պատրաստեն տարբեր ճաշատեսակներ, սակայն ամենաօգտակարը հում շիմինէն պատրաստուած աղցանն է եւ անոր թարմ հիւթը: Նախընտրելի է շոմինը օգտագործել թարմ երկար մնալու պարագային, անոր մէջ կը յառաջանան ազօթային նիւթեր որոնք վնասակար կը դարձնեն զայն:

ԱԻԵԼՈՒԿ Տերեւաւոր բանաջարեղէն է, կը պարունակէ մինչեւ 90 առ հարիւ ջուր: Աւելուկը հարուստ է վիթ. ձ, Ա.ով եւ ազօթային նիւթերով, տապաղանիւթերով եւ բջջաթաղանթով: Ան օգտակար է դեղնախտի, կազերու, աղի-ստամբոսային, լեարդի հիւանդութիւններու պարագային: Ժողովրդական բժշկութեան մէջ կօգտագործուին անոր տերեւները, սերմը եւ արմատները: Սերմը եւ տերեւները ծամել լինտերու բորբոքման, ակուաներու թուլացման ժամանակ: Տապկուած կամ ճաշերու մէջ զայն կ'օգտագործեն ձմրան չորցուած վիճակով, որմէ անոր օգտակար յատկութիւնները չեն պակսիր:

ԽԱՏՈՒՏԻԿ Անոր անդային արժէքը իր կծու համի մէջ է, հարուստ է կենսանիւթերով եւ հանքային տարրերով, արմատները կը պարունակեն 40 աղ հարիւր ինսուլին: Ան կը մաքրէ արիւնը, կը խթանէ թուքի արտադրութիւնը, կը գրգռէ ախորժակը, կը բարելաւէ աղիքներու շարժողականութիւնը: Նախընտրելի է գոտագործել տապկուած եւ աղցաններու մէջ: Ան հակառիւսէ եւ միզամուղ է, կանխարգիլող լեղապարկի եւ միզաքարի կազմութեան:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

presents

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

SUNDAY, SEPTEMBER 20, 2009

VERDUGO PARK, GLENDALE

11:00 AM - 7:00 PM



Live Entertainment
Dance • Arts & Drafts
Food • Kid's Games
Backgammon Tournament

Երգ ու Պար
Արուեստի Գործեր
Փոքրերու Խաղեր
Նարտիի Մրձաշարք
Համադան ճաշեր

**FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**